

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՎԱՀԱՆ ԹԵՔԷԱՆԻ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵՆԵՆ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ (vatcheg@gmail.com)

Վահան Թեքեանի (1878–1945) կենսագիրը՝ Արշակ Ալաօյաճեան (1879–1962), իր *Վահան Թեքեան - իբր հանրային մարդ եւ հրապարակագիր* աշխատութեան մէջ ծաւալուն հատուած մը յատկացուցած է Պոլսոյ Պէրպէրեան Վարժարանի դպրոցակից, կուսակցական յարումով գաղափարակից, Ազգային Երեսփոխանական Ժողովի գծով պաշտօնակից, հրատարակչական ու խմբագրական դաշտի մէջ գործակից եւ այլապէս ալ հոգեկից բարեկամին սաղիմական առաքելութեան¹, նկատի ունենալով չորս գլխաւոր աղբիւրներ.- առաքելութիւնը նշանակող մարմնին՝ Թուրքիոյ հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի 1913-14 տարիներու համապատասխան նիստերու ատենագրութիւնները, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան տպարանէն Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան պատրիարքի (1860-1930) հրամանով լոյսին տրուած Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի (1841–1918) ինքնակենսագրական բնոյթի *Խոհք եւ Խօսք* հատորը², որուն «Երկու Խօսք»-ին մէջ հրատարակիչները անհրաժեշտ նկատած են զգուշացնել ընթերցողները, նշելով. «... թէ ո՛րչափ իրատունք ունի [Օրմանեան] իր դատումներուն մէջ անոնց հանդէպ՝ որոնց հետ չփում եւ գործակցութիւն ունեցած է, ընթերցողներուն կը թողուի վերապահումներ ընել...»³, Թուրքիոյ հայոց պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսի (1868–1947) յուշագրական հատորը⁴, որուն պատրաստութեան մէջ Ալաօյաճեան ինք ալ բաժին մը ունեցած է, եւ Օրմանեանի վերոնշեալ հատորին

¹ Արշակ Ալաօյաճեան, *Վահան Թեքեան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր*, խմբագրեց եւ ծանօթագրեց դոկտ. Վաչէ Ղազարեան, հրատ. Թեքեան Մշակութային Միութեան Մ. Նահանգներու եւ Գանատայի կեդրոնական վարչութեան, Պէյրութ, 1988, էջ 171–213:

² Մաղաքիա արքեպս. Օրմանեան, *Խոհք եւ Խօսք. իր կեանքի վերջին շրջանին մէջ (յեղմահու հրապարակութիւն)*, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929: Ալաօյաճեան իր աշխատութեան մէջ Երուսաղէմի խնդրին ընթացքին շուրջ ընդհանուր գաղափար մը կազմելու համար յղում կը կատարէ Օրմանեանի գործին յատկապէս 220-9 էջերուն:

³ Անդ:

⁴ Զաւէն Արքեպ., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, հրատարակութիւն թիւ 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, տպարան Նոր Աստղ, Գահիրէ, 1947, էջ 44-8:

հրատարակութեան առիթով Թէքէեանի գրած քառամաս խմբագրականն⁵ ու անոր յաջորդած տասնամասնեայ յօդուածաշարքը⁶:

1863ին վաւերացեալ Ազգային Սահմանադրութիւնը Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան ենթակայ տարածքներուն մէջ բնակող հայոց ազգային գործերու գլխաւոր համարառութիւնը վերապահած էր Ազգային Երեսփոխանական Ժողովին, որ կը բաղկանար Պոլսոյ եւ արուարձաններու վիճակներէն ընտրեալ 20 եկեղեցական եւ 80 աշխարհական, ինչպէս նաեւ գաւառներէ ընտրուած 40 երեսփոխաններէ, ընդամենը՝ 140 երեսփոխան: Գաւառական երեսփոխանները կը ներկայացնէին Արեւմտահայաստանի նահանգներու, Կիլիկիոյ, Սուրիոյ, Իրաքի, Թրակիոյ եւ Փոքր Ասիոյ հայերը:

Ազգային Սահմանադրութեան 60րդ եւ 61րդ յօդուածները Ազգային Երեսփոխանական կամ Ընդհանուր Ժողովին կը վերապահէին Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքներուն ընտրութիւնը⁷, իսկ «Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի» խորագրեալ հատուածին 19րդ Յօդուածը կը յստակացնէր թէ Ս. Երուսաղէմի պատրիարքը ամբաստանութեան կրնայ ենթարկուիլ իր Միաբանութեան կամ Կոստանդնուպոլսոյ Խառն Ժողովին կողմէ, Ազգային Ընդհանուր Ժողովին վերապահելով ամբաստանութեան քննութիւնը՝ Պոլսոյ Պատրիարքին վերաբերող սահմանադրական տրամադրութիւններուն համեմատ⁸, այդպիսով պատրիարքներու ընթացքին եւ գործառնութիւններուն վերաբերեալ հիմնաւոր թէ անհիմն մտահոգութիւններ կամ շահադիտական թէ ազգասիրական կեցուածքներ ունեցողները մղելով դիմել Ժողովին՝ որպէս հաշուեպահանջ քննելու կացութիւններն ու առնելու անհրաժեշտ քայլերը:

Թէքէեանի սաղիմական առաքելութեան նախապատմութիւնը կարելի է ըսել թէ սկսած էր դամասկացի Ղեւոնդ վարդապետ Մագսուտեանի (1852–1922) Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ելեւմտից տեսուչ նշանակումով 1878ին: Լաւ եւս է ըսել այն օրէն, ուր ան Միաբանութեան Տնօրէն Ժողովին համարատու տեսուչի իր պաշտօնը կատարելով, միաժամանակ անդա-

⁵ Խմբագրական [Թէքէեանի], «Խոհք եւ խօսք» (Արեւ օրաթերթ, 23 Մայիս 1929–28 Մայիս 1929):

⁶ Վահան Թէքէեան, «Օրմանեան Ս. եւ Երուսաղէմ – անձնական բողոք մը եւ ճշդում մը» (Արեւ, 4 Յունիս 1929–15 Յունիս 1929):

⁷ Ազգային սահմանադրութիւն հայոց – նիզամնամէի միլլէթի էրմէնիան, տպարան Յ. Միւհէտիսեան, Կ. Պօլիս-Սթանպօլ, 1863, էջ 39–40:

⁸ Նոյն, էջ 21–22: 19րդ Յօդուածը ամբաստանող կողմ կը նկատէ Պոլսոյ Կրօնական եւ Քաղաքական Ժողովները, որոնք նաեւ կը կոչուէին Խառն Ժողով՝ երբ միասնաբար կը գումարէին իրենց նիստերը, կը ներկայանային նոյնպէս որպէս Կեդրոնական Վարչութիւն, նիստը Թուրքիոյ հայոց պատրիարքին կամ անոր տեղապահին ներկայութեամբ գումարուելու պարագային:

մակցած էր համարառու Տնօրէն Ժողովին եւ նոյնիսկ վարած ատենապետութիւնն անոր⁹:

Այս կրկնակ հակադիր հանգամանքները տեսականօրէն պարարտ հող կրնային ընծայել հաշուետւութեան փորձութեան դիմելու հակամէտ որեւէ անձի եւ վերը նշուած աղբիւրներն ու սաղիմահայ միաբաններու կենսագիր Մկրտիչ արք. Աղանունի (1863–1942)¹⁰ յստակ կը դարձնեն թէ Ղեւոնդ վարդապետ դիմած այդ փորձութեան:

Հաշուետւութեան տարիներ շարունակ նպաստած էր Ազգային Երեսփոխանական Ժողովին կազմալուծեալ վիճակը, որովհետեւ 1896ի 20 Նոյեմբերի նիստէն ետք օսմանեան կառավարութիւնը դադրեցնել տուած էր սահմանադրութեան գործադրութիւնը¹¹, որ պիտի վերսկսէր 1908 Յուլիսի

⁹ Օրմանեան կը գրէ. «Մագսուրեան ապօրինի կացութեան մէջ կը գտնուի, երբ՝ հակառակ Կանոնագրին՝ ինքն պաշտօնեայ ըլլալով Տնօրէն Խորհրդոյ անդամակից եւ ալիքնապետ կը մնայ, եւ ելեմտապետի, գանձապետի, կալուածապետի, շինուածապետի պաշտօնները հաւաքաբար իր վրայ կ'ամփոփէ, եւ իր գործողութիւնները ինքն կը վաւերացնէ» (Օրմանեան, էջ 227):

¹⁰ Աղանունի իր Միաբանք եւ այցելութեան Երուսաղէմի աշխատութեան մէջ (տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929) Ղեւոնդ վարդապետի մասին կը գրէ. «Իր հսկողութեամբ կը կառուցուին Յարութիւն [Վեհապետեան] պատրիարքի կալուածը ... եւ Ալեմպի հիւրանոցը վանքին դրամովը եւ յօգուր նոյն հաստատութեան: Այս շինութիւններուն եւ իր եմպական բոլոր գործառնութիւններուն համար ամբաստանուելով՝ երբ հաշուետւութենէ կը խուսափի...» մանրակրկիտ քննութեամբ մը կը վճռուի թէ Ղեւոնդ վարդապետ «11267 օսմ. ոսկի Ս. Յակոբի վանքին պարտական է»: Ենթական տետրակ մը հրատարակելով կը մերժէ ընդունիլ վճիռը: Կրայ կը հասնի առաջին աշխարհամարտը, միաբանութեան կարգ մը անդամներու հետ Ղեւոնդ ալ «կը մեկուսանայ Դամասկոս», բայց 1916ին Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսին հրաւերով 1916-18՝ կրկին կը գտնուի նոյն պաշտօնին գլուխը: «1922-ին կը վախճանի Երուսաղէմի մէջ առանց հաշուական խնդիրներուն վախճան մը տալու: Տիրացած հարստութիւններէն ու գեպիներէն Ս. Յակոբի վանքը չ'օգտուիր. վասն զի մահուանէ առաջ ուրիշներու կը փոխանցէ գանոնք. միայն վանքին կը մնան եօթը մթերանոցները որոնք իր ծախքովը շինուած էին վանքապարկան գետնին վրայ...» (էջ 233):

¹¹ Ալպոյաճեան կը գրէ. «[Օսմանեան] Սահմանադրութեան վերահաստատութենէն առաջ ... հանրութեան բոլոր խաւերը զբաղեցնող կարեւորագոյն խնդիրն էր Երուսաղէմի վանքին հաշուական հարցը, որ տարիներու անցեալ մը ունէր, - եւ կ'աւելցնէ. - Ղեւոնդ վրդ. Մաքսուրեանը ... իրեն գործակից քանի մը միաբաններով, - անոնց գլխաւորն ըլլալով Երուսաղէմի Պոլսոյ փոխանորդ Գէորգ եպս. Երէջեանը, - ո՛չ միայն զեղծումներ ըրած էր, այլեւ տարիներով իր մատակարարութեան հաշիւը չէր տուած, օգտուելով Պոլսոյ մէջ Ազգային Երեսփոխանական Ժողովին նիստերուն արգիլուած ըլլալէն: Միաբաններէն մաս մը աւելի «մեղրի կարասէն» իրենց հեռու մնալէն քան անկեղծ նախանձախնդրութեամբ մը, հաշիւ պահանջած էին եւ, ա՛յսպէս, միաբանութիւնը երկուքի բաժնուած էր՝ հաշուելոյս եւ հաշուեպահանջ կոչումներով» (Ալպոյաճեան, էջ 171): Սակայն միայն Մագսուրեան-Ե-

օսմանն են նոր սահմանադրության հաստատումն քանի մը ամիս ետք՝ 3 Հոկտեմբեր 1908ին: Օրմանեան պատրիարքի հրաժարեցումով Պոլսոյ աթոռին Մատթէոս Գ. Իզմիրլեան արքեպիսկոպոսի (1845–1910) վերընտրութենէն ետք միայն Ազգային Ընդհանուր Ժողովը պիտի զբաղէր Երուսաղէմի խնդրով՝ որպէս օրակարգ-նկատի ունենալով քննիչ յանձնաժողովի մը կազմութեան հարցը:

Թէքէեանի Եգիպտոսի վիճակէն որպէս երեսփոխան ընտրութիւնը կը վաւերացուի Ազգային Ընդհանուր Ժողովի 21 Նոյեմբեր 1908ի նիստի ընթացքին, երբ Թէքէեան Աղեքսանդրիայէն արդէն անցած էր Պոլիս, իսկ Երուսաղէմի Քննիչ Յանձնաժողովի համեմատական ընտրութիւնը կ'ամբողջանայ Ժողովին յաջորդ՝ 5 Դեկտեմբեր 1908ի նիստի ընթացքին:

Մինչ քննիչ յանձնաժողովը առաջ կը տանի իր աշխատանքները, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան տնտեսական աննախանձելի վիճակը կը յամենայ՝ չարաշահումներով մէկտեղ¹²:

Առանց աւելի խորանալու մանրամասնութիւններու մէջ, որոնք լաւապէս ներկայացուած են արդէն մա'նաւանդ Ալպօյաճեանի աշխատութեան մէջ եւ նիւթ կրնան կազմել առանձին ուսումնասիրութեան մը, նշենք թէ Թէքէեան, որ Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերու ընթացքին ելոյթներով եւ ընդդիմախօսութիւններով մասնակցութիւն բերած էր սաղիմական խնդրին ու կանոնադրական բարեփոխումներու քննարկումներուն, Պոլսոյ Պէրպէր-

րեցեանի հարց չէր Ազգային Ժողովը յուզածը: Ինչպէս Օրմանեան կը նշէ, սաղիմական խնդիրը ընդհանուր առմամբ նոյն անունը պահելով հանդերձ, «բուն խնդիրը նոյնը մնացած չէ[ր], այլ տարուէ տարի կամ միջոցէ միջոց նոր կերպարներ առած է[ր]»: Ապա կը յիշատակէ խնդրին հանգրուանները՝ Մագսուտեանի անձնական խնդիր, Պատրիարքի դէմ ամբաստանութիւն, տեղապահի նշանակում՝ Պատրիարքը աթոռի վրայ պահելով մէկտեղ, Պատրիարքի վախճանում, Պոլսէն իրարայաջորդ պատուիրակութիւններու առաքում, տեղապահի ձեռնութիւն, նոր պատրիարքի ընտրութեան խնդիր, կանոնագրի փոփոխութիւն (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, *Դիպրոդագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին զննութիւնն ու լուսաբանութիւնը*, Երուսաղէմ, տպարան Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 1):

¹² Ընթացքը Երուսաղէմի պատրիարքութեան գլովսը գտնուող Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեանի, որ իր մահկանացուն պիտի կնքէր 1910ին, կրնայ գաղափար մը տալ իրերու դրութեան մասին: Ազգային Ընդհանուր Ժողովի 5 Յունիս 1909ի նիստին ներկայացուած Երուսաղէմի Քննիչ Յանձնաժողովի պաշտօնագիրը կը տեղեկացնէր թէ սպառնալիքներու տեղի տալով եւ իր դիրքն ալ փոխելով, Վեհապետեան պատրիարք Ազգային Ընդհանուր Ժողովը ապակողմնորոշող տեղեկութիւններ հաղորդած եւ անոր տնօրինումներուն հակադիր ընթացք ցոյց տուած էր: Աւելին, մինչեւ իսկ Բարձրագոյն Դռան մօտ Պոլսոյ պատրիարքութիւնը ամբաստանած էր Երուսաղէմի անկախ Աթոռին իրաւունքները ոտնակոխել փորձելու մէջ, ինչպէս պիտի պարզուէր նոյն նիստին ընթերցուած 20 Մայիս 1909 թուակիր հեռագրէն, որ պատճէնն էր ամբաստանագրին:

եան Վարժարանին մէջ որպէս դասատու իր նոր պաշտօնավարութեան ձեռնարկելիք օրն իսկ, 1913ի Սեպտեմբեր 15ին, կը հարկադրուի մեկնիլ Կեսարիա որպէս նորանշանակ տեսուչը Ս. Կարապետ վանքի ժառանգատրացին կամ՝ իր բնորոշումով՝ երկրորդական վարժարանին¹³, ուր եւս իր պաշտօնավարութիւնը կը մնայ թերաւարտ, որովհետեւ Ազգային Ընդհանուր Ժողովը զինք ներկայացուցիչ ընտրած ըլլալով Երուսաղէմի պատրիարքութեան մօտ, 31 Յունուար 1914ին ճամփայ կ'ելլէ դէպի Պոլիս՝ իր նոր սաղիմական առաքելութիւնը ձեռք առնելու համար:

Դա՛րձեալ առանց խորանալու Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ քուէարկուած կանոնագրային փոփոխութիւններուն եւ անոնց յառաջացուցած թեր ու դէմ տեսակէտերու մանրամասնութիւններուն մէջ¹⁴, հակիրճ

¹³ Թէքէեան այդ առիթով պիտի գրէր իր միակ ճամփորդական օրագիրը՝ «Կեսարիա երթողարձի եւ բնակութեան օրագիր մը», որ տարիներ անց հրատարակութեան պիտի յանձնէր Պոլսոյ *Ժողովուրդի ձայնը-Ժամանակ* թերթին մէջ եւ որ Գրիգոր Պըլտեանի եւ Սեւան Տէյիրմենճեանի համատեղ պատրաստութեամբ ու Պըլտեանի յառաջաբանով պիտի հրատարակուէր Պոլիս, 2016ին, իբրեւ *Ժամանակ* օրաթերթի մատենաշարին 4րդ հատորը: Հարկ է դիտել տալ թէ օրագրութեան եւ հետեւաբար 2016ի հրատարակութեան մէջ թուականները նշուած են հին տոմարով, որով ընթերցողը Սեպտեմբեր 15ի փոխարէն կը հանդիպի Սեպտեմբեր 2ի: Պըլտեանի յառաջաբանին վերաբերեալ նշելի է երկու կէտ.- Ա. Թէքէեան դէպի Երուսաղէմ ճամփայ ելած է ոչ թէ Մարտ-Ապրիլին, այլ՝ ստուգապէս հին տոմարով Ապրիլ 29ին (նոր տոմարով՝ Մայիս 12) եւ Զմիտնիոյ մէջ Օրմանեանին միանալով միասնաբար Յուպպէ (Եաֆա) հասած են Մայիս 5/18ին: Իդէպ, Թէքէեան շոգենալին մէջ ուրուագծած է դիմանկարը Օրմանեանի՝ «անոր մրափի պահուն» (Թէոդիկ, *Ամէնուն ցարեցոյցը*, ԺԶ. տարի, 1922, էջ 230): Բ. Թէքէեան հրաւիրուած էր որպէս տեսուչ կամ տնօրէն Ս. Կարապետ վանքի վարժարանին եւ ո՛չ թէ վանքին: Յարակցաբար նշենք թէ Թէքէեանի ճամփայ ելած օրը Օտեան ժամանակաւորապէս խափանեալ *Ժամանակի* «Հեռաձայն» անուամբ լոյս տեսնող 57րդ համարին մէջ (1562), 2/15 Սեպտեմբերին կը ստորագրէր «Գեր. Բարսեղ Ս. Թէքէեան պատրիարք Կ. Պոլսոյ» կտորը, ուր նախ կ'ըսէր. «Այս առօրու կանուխ մեր բարեկամը, Վահան Թէքէեան, շոգեկառքով կը մեկնի դէպի իր նոր պաշտօնապետդին, Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը որուն վարժարանին տեսուչ անուանուած է» ու իր երգիծական շունչով բանաստեղծ եւ հետեւաբար *միսթըք* Թէքէեանը երեւակայաբար կը դարձնէր Արմաշի վանքէն շրջանաւարտ եւ Դուրեանի կողմէ վարդապետ օժեալ Տէր Բարսեղ, որ պիտի դառնար Կեսարիոյ առաջնորդ եւ հուսկ պատրիարք Թուրքիոյ հայոց...:

¹⁴ Բաւարարուինք նշելով թէ սաղիմական միաբաններու մեծամասնութիւնը, Օրմանեանի նման, կ'ուզէր բարեփոխեալ կանոնադրութիւնը քննարկման դնել հին կանոնադրութեան հիմամբ Սրբոց Յակոբեանց Աթոռի նոր պատրիարքին ընտրութենէն ետք եւ այդ ուղղութեամբ տարուած աշխատանքները յաջողած էին նաեւ ապահովել օրինութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցի, որ իր 14 Փետրուար 1914 թուակիր կոնդակին մէջ՝ ի պատասխան Զաւէն Պատրիարքի 19 Դեկտեմբեր 1913 թուակիր նամակին, կ'ըսէր թէ աչքի առջեւ ունենալով

նշենք թէ Թէքէեան կը հարկադրուի իրադարձութիւններու բերումով մինչեւ Մայիս սպասել Պոլիս, իսկ երբ վերջապէս կը հասնի պահն ու կը մեկնի, Երուսաղէմի մէջ հանդիպելով Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ վարչական պատուիրակ կարգուած Օրմանեանի մեքենայութիւններուն, կ'եզրակացնէ թէ նման պայմաններու մէջ ապարդիւն պիտի անցնէր իրեն վստահուած առաքելութիւնն ու կ'որոշէ մեկնիլ Եգիպտոս՝ սպասելու համար Ազգային Երեսփոխանական Ժողովին կատարելիք կարգադրութիւններուն:

Օրմանեանի *Խոհք եւ Խօսք*ին մէջ ներկայացուած կարգ մը տեղեկութիւններ հերքող, ճշգրտող կամ լուսաբանող իր վերը յիշուած յօդուածաշարքին մէջ Թէքէեան յիշատակելէ ետք Ազգային Երեսփոխանական Ժողովի իր «հին հակառակորդին՝ [դաշնակցական] Յարութիւն] Շահրիկեանի» հետ փոխանակած թղթակցութիւնը¹⁵, կը գրէր. «... փափաքելի էր որ Երուսաղէմի Միաբանութիւնը որ պատշաճ դատած է տպել Օրմանեանի սխալապատում տեղեկութիւնները, անոր հոն թողած թուղթերուն մէջէն գտնէ եւ հրատարակութեան տայ ... Պատրիարքարանի եւ ինծի հետ փոխանակած թղթակցութիւնը մեր խնդրոյն վերաբերմամբ: Ատիկա շատ բան պիտի լուսաբանէ եւ պիտի հաստատէ ըսածներուս ճշդութիւնը»¹⁶:

Թէ Օրմանեանի թողած թուղթերուն մէջ պահպանուած պիտի ըլլա՞ն Թէքէեանի ակնարկած թղթակցութիւնները կամ հակող պիտի ըլլա՞յ անոնց վրայ՝ այդ հարցին դժուար է պատասխան մը տալ: Ներկայիս, կարելի է ներկայացումն է Թէքէեանի սաղիմական առաքելութեան վերաբերող

հին եւ ներկայ իրադարձութիւններն ու բոլոր հանգամանքները Ս. Յակոբեանց վանուց, երկպառակութիւններն ու խռովայոյզ վիճակը անոր միաբանութեան, եւայլն, նպատակայարմար եւ օգտակար չի գտներ պատրիարքի ընտրութենէն առաջ հիմնական փոփոխութիւններու մուծումը կանոնադրութեան մէջ, բայց պատրիարքական ընտրութիւնը ղեկավարելու, առժամապէս միաբանութեան գործերը կանոնաւորելու եւ ելեւմտական հաշիւներն ու կալուածներու եւ ստացուածքներու վիճակը քննելու համար անհրաժեշտ կը նկատէր անյապաղ դրկել լիազօր մարմին մը «կազմեալ ի ձեռնհաս եւ ի հեղինակաւոր անձանց, յորոց մինն լիցի արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս» (*Արարար* պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Մարտ, Գ:1914, էջ 198–200): Ալպօյաճեան այս մասին կը գրէ. «... հաւանական է կարծել թէ Մանկունի եպս.ը որ ... սաստիկ հակառակ էր կանոնագրին, ինք Գէորգ Ե. կաթողիկոսին թելադրած ըլլար մարերմական գրութիւնով մը» անգործադրելի ձգել կանոնագիրը: Ու կ'աւելցնէ. «Ամէն պարագայի, այդ կոնդակը բնաւ Ազգային Ժողովին չհաղորդուեցաւ» (Ալպօյաճեան, էջ 195):

¹⁵ Ատոմ գրչանունով ծանօթ, Յեղասպանութեան զոհ Յարութիւն Շահրիկեան (1860–1915), Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերու ընթացքին հանդէս եկած է Երուսաղէմի Յանձնաժողովի տեղեկաբերի դերով:

¹⁶ Թէքէեան, «Օրմանեան Ս. եւ Երուսաղէմ» (*Արեւ*, 14 Յունիս 1929):

ցարդ անտիպ նիւթերու, յայտնաբերուած՝ Պոլսոյ պատրիարքութեան Տեղեկատու Դիւանի (ՊՏԴ) Երուսաղէմ գտնուող վաւերաթուղթերուն մէջ:

Թէքէեան ինք այդ նիւթերը յանձնած ըլլալու է Տեղեկատու Դիւանին, թերեւս նկատի ունենալով անոնց աղերսը իրեն վստահուած առաքելութեան հետ: Կարելի է այն է, որ պահպանուած նիւթերը լոյսին կը բերեն սաղիմական պատուիրակներու դերակատարութեան կարգ մը մանրամասնութիւններ եւ կը ծառայեն հաստատելու կամ ջրելու այդ առաքելութեան վերաբերող ցարդ յայտնի գրականութեան մէջ հանդիպող տեղեկութիւններ, միաժամանակ նպաստելով անելի հիմնաւոր պատկերացումի մը կազմութեան՝ դերակատարներու նկարագրային գիծերուն եւ անոնց պատասխանատուութիւններուն մասին:

Վաւերագրերու լեզուն պահպանած ենք նոյնութեամբ, անկիւնաւոր փակագիծեր կիրարկելով հո՛ւն ուր անհրաժեշտ նկատած են, բացառելով Թէքէեանի 14/27 Յունիս թուակիր յապաւումներով ծանրաբեռն տեղեկագիրը:

ՎԱԽԵՐԱԳՐԵՐԸ

Ա.

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Համար 1931

Կոստանդնուպոլիս, 18 Յունվար 1914

Ազնուաշուք

Վահան էֆ. Թէքէեան

ի Կեսարիա

Ազգ[ային] Երեսփոխանական Ժողովը, երէկ իր ԻԳ. նիստին մէջ, վերջին անգամ վաւերացուցած Երուսաղէմի կանոնադրութեան 44րդ յօդուածի տրամադրութեան համաձայն¹⁷, կատարելով ընտրութիւնը Ազգային Ժողովի ներկայացուցչի, քուէարկութեան մասնակցող 59 երեսփոխաններէ 30ին քուէով, նոյն պաշտօնին կոչեց Ձեր Ազնուութիւնը¹⁸:

Ձեր ուղեւորութեան եւ պաշտօնին կիրառութեան համար հարկ եղած կարգադրութիւնները ընելու մասին գրուած ըլլալով արդէն Ամեն[ապատիւ] Ս[րբազան]

¹⁷ 44րդ խնդրայարոյց յօդուածը կը տրամադրէր հետեւեալը. «Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովը Ս. Երուսաղէմի Յակոբեան վանուց վարչութեան բոլոր մասերուն վրայ իր հսկողութեան իրաւունքը տեղւոյն վրայ անմիջական կերպով կը գործադրէ իր կողմէ ընտրուած մնայուն ներկայացուցչի մը միջոցաւ» (ԺԹ. Նիստ Ազգ. Ընդհ. Ժողովի, 15 Նոյեմբեր 1913, էջ 359): Նոր կանոնագրին «հիմնական տրամադրութիւններ»ուն համաձայն, ակնարկուած վարչութիւնը կը բաժնուէր երեք մասի՝ կրօնական, տնտեսական եւ ուսումնական, եւ կը շեշտուէր. «Երուսաղէմի վանքին վարչութեան բոլոր մասերուն վրայ Թուրքիոյ Հայոց Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովը իր վերին հսկողութեան իրաւունքը կը գործադրէ իր կողմէ ընտրուած ներկայացուցչի միջոցով» (ԻԱ. Նիստ Ազգ. Ընդհ. Ժողովի, 20 Դեկտեմբեր 1913, էջ 385):

¹⁸ Երկրորդ առաւելագոյն քուէ ստացողն եղած էր Օրմանեան՝ 15 ձայնով (17 Յունուար 1914ի ԻԴ. նիստ Ազգ. Ընդհ. Ժողովի, էջ 417):

Պատրիարք Հօր, Ազգային՝ Վարչությունը Երուսաղեմի խնամակալության հետ համախորհուրդ պիտի գործադրէ կարեւոր միջոցները եւ պիտի հաղորդէ Ձեզ:

Ազգ. Ժողովը վստահ Ձեր արժանեաց վրայ, լիայոյս է որ Երուսաղեմի վանքին բարեկարգութեան նկատմամբ Ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, որուն ապացոյցը տուած էք Ձեր երեսփոխանական պաշտօնավարութեան միջոցին օգտակար թելադրութիւններով եւ առաջարկներով, գործնական փորձով ալ ցոյց պիտի տաք, այս կարեւոր պաշտօնին մէջ, կատարելով կէտ առ կէտ այն պարտաւորութիւնները, որոնք սահմանուած են կանոնագրին առանձին յօդուածներով: Այս պատճառաւ ներփակեալ կը խրկենք Ձեզ վաւերացեալ կանոնագրէն օրինակ մը:¹⁹

Ազգ. Ժողովոյ քուէարկութեան արդիւնքին հետ յայտնելով մեր շնորհաւորութիւնները, կը մաղթենք արդիւնաւորութիւն Ձեր ջանքերուն համար:

Մնամք յարգանքօք

Ազգ. Ժողովոյ

Ատենադպիր
Ե[րուսանդ] Պէյազճեան²⁰

Ատենապետ
Տօգ. Ն[ազարէթ] Տաղաւարեան²¹

Բ.

Վերի նամակէն բացի, 20 Յունուար 1914 թուակիր երկու հեռագրեր, մին՝ [Սարգիս] Սուին, [Յարութիւն] Շահրիկեան եւ Արամ Հալաճեան ստորագրութեամբ²², միւսը՝ միայն Հալաճեան²³, Թէքէեանին կը տեղեկացնեն Ազգային Երեսփոխանական Ժողովին որոշումը:

Թէքէան Հալաճեանի ուղղուած երկու հեռագրերով, 22 եւ 27 Յունուար 1914ին կը յայտնէ շնորհակալութեամբ ստացած ըլլալը Սուին-Շահրիկեան-Հալաճեան հեռագրին եւ սկզբունքօրէն ընդունիլը եղած կարգադրութեան²⁴:

Թէքէանի պաշտօնակոչութեան վերաբերեալ հեռագիր մըն ալ առաքած է Զաւէն Պատրիարք 23 Յունուար 1914ին²⁵:

Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի պաշտօնաթուղթով Թէքէանի կ'ուղարկուի 55 թուահամարով հետեւեալ պաշտօնագիրը:

Կ[ոստանդնուլ] Պոլիս, 23 Ապրիլ 1914

Ազնուաշոք
Վահան Էֆէնտի Թէքէան
Են. Են. Են.

¹⁹ Ակնարկուած կանոնադրութեան վաւերացեալ օրինակը չէ պահպանուած նամակին հետ:

²⁰ Պէյազճեան Բ. ատենադպիրն էր Ազգային Երեսփոխանական Ժողովին՝ Հմայեակ Արամեանցն ընտրուած ըլլալով Ա. ատենադպիր:

²¹ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Թ, Թ2:

²² ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Թ4 (օսմաներէն, ձեռագիր):

²³ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Թ5 (օսմաներէն, ձեռագիր):

²⁴ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Թ6 (օսմաներէն, ձեռագիր):

²⁵ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Թ8 (օսմաներէն, ձեռագիր): Թէքէան հեռագրին հայատառ վերարտադրութիւնը ներկայացուցած է Երուսաղեմէն Հրանդ Մամուրեանի ուղղած 5/18 Յունիս թուակիրին մէջ:

Ազգային Կեդր. Վարչության Խառն Ժողովոյ որոշման համաձայն Վարչական Պատուիրակութիւն մը, որ կազմուած է անդամակցութեամբ Կրօնական Ժողովոյ Ատենապետ Ամեն[ապատիւ] Տէր] Մաղաքիա Արքեպսկ. Օրմանեանի եւ Քաղաքական Ժողովոյ անդամներէն Ազն[ուամեծար] Կիլեղեան էֆէնտիի, կ'ուղետորի յետուսադէմ՝ Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնելու եւ անոր ելեմտական վիճակը քննելու եւ ստուգելու եւ ըստ այնմ Ընդհանուր Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրութեան դրուելու համար: Ազգային Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ Ձեր Ազնուութիւնն եւս՝ իբրեւ ներկայացուցիչ Ընդհ[անուր] Ժողովոյ, ընկերակցի Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ²⁶ ձեռնարկելու համար ի գործ, Ընդհանուր Ժողովոյ կողմէ իրեն տրուած իրաւասութեանց սահմանին մէջ:

Վարչական Պատուիրակութիւնը պիտի մեկնի մէկ քանի օրէն. հետեւաբար, որոշմամբ Քաղաքական Ժողովոյ կը հրաւիրենք Ձեր Ազնուութիւնն որ բարեհաճի տեսնել իր պատրաստութիւններն՝ ճամբայ ելլելու համար Պատուիրակութեան հետ:

Մնամք աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Զաւէն Արքեպ. Տէր Եղիայեան²⁷

Գ.

[20 Մայիս 1914]

Ամենապատիւ

Տ. Զաւէն Ս. Արքեպս. Տէր Եղիայեան

Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Նախագահ Ազգ. Երեսփոխանական] Ընդհ. Ժողովոյ

Կ. Պոլիս

Ազգ. Երեսփ. պատկառելի Ժողովն, համաձայն նոր Կանոնագրի 44րդ Յօդուածին, ընտրութիւն կատարած եւ պատիւ ըրած ըլլալով զիս ընտրել իր կողմէ Ներկայացուցիչ Երուսաղէմի Ս[րբոց] Յակոբեանց Վանուց Միաբանութեան մօտ, յանձնած էր ըստ օրինի բովանդակ Կանոնագրին եւ իր այս որոշման գործադրութիւնը Ազգ. Կեդր[ոնական] Վարչութեան, ինչպէս կը ծանուցանէր ինձ Մայր Դիանի 18 Յունվ. 1914 թուականաւ պաշտօնագիրը: Սոյն գրութեան հետ միաժամանակ ստանալով Ձերդ Ամենապատուութեան 23 Յունվ.ի հեռագիրը, որով Ազգ. Կեդր. Վարչութեան Պատ. Խառն Ժողովին որոշմամբ զիս ի Պոլիս կը հրաւիրէիք, Յունվ. 31ին մեկնեցայ Կեսարիայէն ուր կը գտնուէի տեղւոյն Ս. Կարապետ Վանուց Ժառանգատրաց Բարձր. Վարժարանին Տեսուչի պաշտօնով եւ Պոլիս հասայ Փետր. 6ին, ուր անմիջապէս ինքզինքս դրի Ձեր Սրբազնութեան տրամադրութեանը ներքեւ: Յայտնի է Պատկ[առելի] Երեսփ. Ժողովին՝ թէ ի՞նչ պատճառներով, այսինքն միմիայն դրկող մը չգտնուելուն պատճառաւ, մնացի Պոլիս մինչեւ Ապրիլ 29, երբ վերջապէս նորընտիր Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ (որմէ տեղեկութիւն ունեցաւ նաեւ

²⁶ Այս «յետոյ» բառը Օրմանեան պիտի վերածէր գլխաւոր կոտանի՝ իր մեքենայութիւններն անով արդարացնելու համար, ինչպէս պիտի պարզուի յաջորդական նամակներէ:

²⁷ ՊՏԴ, Թ291-Թ292:

Ազգ. Ժողովը) մեկնեցանք Վարչության պատուիրակներէն Տիար Գեորգ Կիւրեղեանի հետ եւ Իզմիրի մէջ միանալով Վարչության միւս պատուիրակ Ամեն. Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի, Եաֆա հասանք Մայիս 5ի առաւօտուն եւ Երուսաղէմ՝ յաջորդ օրը՝ Մայիս 6ի երեկոյին:

Մեր ժամանումը հեռագրաւ Ձեր Սրբազնութեան ծանուցում ըլլալով արդէն, զիս ընտրող եւ իր կողմէ ներկայացուցիչ կարգող Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովին հետ առաջին հաղորդակցութիւնս սկսելու համար սպասեցի որ պաշտօնիս բնութեան համաձայն միջոց ունենամ քիչ ու շատ իրողութեանց տեղեկանալու եւ ըստ այնմ տեղեկացնելու Ժողովին: Այս առթիւ տոյն առաջին գրութեանս մէջ օգտակարութենէ զուրկ չեմ համարեր յայտնել թէ՛ Ազգ. Վարչութիւնը, Ապրիլ 23 թուակիր Ձեր Սրբազնութեան կողմէ ինձ ուղղուած պաշտօնագրով՝ կը յայտնէր վերոյիշեալ Պատուիրակութեան կազմութիւնն եւ մօտալուտ ուղեւորութիւնը Երուսաղէմ «Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնելու եւ անոր ելեւմտական վիճակը քննելու եւ ստուգելու եւ ըստ այնմ Ընդհ. Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրել տալու համար» եւ կ'աւելցնէր. «Ազգ. Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ Ձեր Ազնուութիւնն եւս, իբրեւ ներկայացուցիչ Ընդհ. Ժողովոյ, ընկերակցի Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ ձեռնարկելու համար ի գործ, Ընդհ. Ժողովոյ կողմէ իրեն տրուած իրաւաստութեանց սահմանին մէջ:» Սոյն պաշտօնագրին պարունակութեան համաձայն, Ազգ. Վարչութիւնն իր Ապրիլ 25ի նիստին միջոցին բերանացի եւս սահմանած ըլլալով պաշտօնիս սկզբնական մասին բնութիւնը, հանդերձ մի քանի կարեւոր լուսաբանութեամբք, փութացի ինծի ուղղուած հրաւերն ընդունիլ եւ գոնէ գտնուիլ պաշտօնատեղիս, այն վստահութեամբ թէ շուտով առիթ պիտի տրուի ինծի բուն իսկ պաշտօնավարութեանս ձեռնարկելու:

Վասն կանոնաւորութեան համառօտիւ հաստատելէ ետք իբր ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Երուսաղէմ ժամանումիս նախընթաց կէտերը, կը փութեմ հաղորդել Պատկ. Ժողովոյն թէ տասնըհինգօրեայ բնակութիւն մը արդէն ունեցանք, Վարչութեան պատուիրակները եւ ես, Ս. Յակոբեանց Վանքին մէջ, որ զիս ի վիճակի չի դնէր տակաւին ուղղակի Պատուիրակութեան նախապատրաստական աշխատութեանց մասին գաղափար մը կազմելու եւ յուսալու որ մօտեքս պիտի կրնամ ձեռնարկել բուն այն գործին որ Պատկ. Ընդհ. Ժողովէն յանձնուած է ինձ, համաձայն իր գծած Կանոնագրին:

Այս տասնըհինգօրեայ նախամիջոցը, սակայն, եթէ ինձ համար անօգուտ եղաւ Պատուիրակութեան նախապատրաստական աշխատութեանց հետեւելու տեսակէտէն, բոլորովին օգտակարութենէ զերծ չեղաւ սա՛նկատմամբ որ կրնայ գաղափար մը կազմել Միաբանութեան ներկայ կացութեան մասին, ինչ որ կը մղէ զիս հաստատելու թէ՛

1° Վանական գործոց անգոհացուցիչ ընթացքը այնպիսի իրողութիւն մըն է զոր անխտիր կը խոստովանին Միաբանութեան բոլոր անդամները եւ մէյ մէկ կերպ տարբեր միջոցաւ կ'սպասեն անոր վերջ դրուելուն.

2° Նոր Կանոնագրի գործադրութեան ի նպաստ եւ հակառակող միաբաններ կը գտնուին.

3° Հակառակողներու մէջ կան որ բարեմտօրէն եւ անկեղծ համոզմամբ այդ կարծիքը կը յայտնեն եւ ես կը յուսամ որ Պատուիրակութիւնը մի քիչ ջանք ընելով

պիտի յաջողի այդպիսիներն համոզել եւ օգտուիլ անոնց բոլորանուէր աջակցութենէն ստեղծուելիք նոր դրութեան մէջ, որ գէթ պիտի գայ կասեցնել ներկայ կործանարար ընթացքին շարունակութիւնը.

4° Եւ գլխաւորապէս, Կեդրոն[ական] իշխանութիւնը²⁸ որ մինչեւ վերջերս իր հետեւած անորոշ եւ անվճռական ուղղութեամբ պատասխանատուութեան մեծ բաժին մը ունի, պէտք է այսուհետեւ շարունակէ դարմանելու իր սխալները՝ կորովի եւ հետեւողական քայլեր առնելով, ինչպէս սկսաւ, եւ կատարէ անմիջապէս ըստ Կանոնագրի իրեն վերաբերող գործերը, ինչպէս կազմութիւն խնամակալութեան, ընտրութիւն եւ վաւերացում որոշեալ մի քանի կարեւոր պաշտօնեաներու, եւ որոշում ի մասին Ներքին Կանոնագրի կազմութեան:

Բացարձակապէս վստահ եմ, այժմ անելի քան առաջ, թէ այն պարագային միայն՝ երբ Պատկ. Ազգ. Ժողովն եւ Ազգ. Վարչութիւնը ուղիղ մտքով եւ ուղիղ քայլերով կատարեն իրենց գործի պարտականութիւնը հանդէպ Երուսաղէմի, Երուսաղէմը եւս կը դադրի ազգին մտահոգութիւն պատճառելէ եւ կ'ըլլայ մեծապէս անելի արդիւնաւոր քան այժմ, որուն համար շատ միջոցներ եւ տարրեր բաւական ունի եւ կրնան ուրիշներ ալ դիւրաւ ստեղծուիլ այն ատեն:

Մնամ ամենախորին յարգանքօք

Վահան Թէքէեան

Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ²⁹

Դ.

Երուսաղէմ, [Մայիս 1914]

Վսեմաշուք

Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան

Ատենապետ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

ի Կ. Պոլիս

Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանուց 1913ի կանոնագրին 44րդ Յօդ[ուած]ին համաձայն Ներկայացուցչի ընտրութիւն կատարած եւ զիս այդ պաշտօնին կոչելու պատիւն ըրած ըլլալով, ըստ օրինի թէ՛ իր այս որոշման եւ թէ՛ բովանդակ կանոնագրին գործադրութիւնը յանձնած էր Ազգ. Կեդր. Վարչութեան: Ըստ այնմ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, Պատկ. Խառն Ժողովոյ որոշմամբ, իր Յունվ. 18, 1914ի հեռագրաւ զիս ի Պոլիս կը հրաւիրէր Կեսարիայէն՝ ուր կը գտնուէի իբրեւ տեսուչ Ս. Կարապետի Բարձր. Վարժարանին, ուրկէ մեկնելով Յունվ. 31ին, Փետր. 6ին հասայ Պոլիս, ուր ինքզինքս անմիջապէս դրի Ժողովին տրամադրութեան ներքեւ: Ծանօթ է Պատկ. Երեսփ. Ժողովիդ՝ թէ նոյն միջոցին Վարչութիւնը հրաժարական մատուցած ըլլալով, մինչեւ նոր Վարչութեան կազմութիւնը, մօտաւորապէս երեք ամիս, ո՛րեւէ ձեռնարկ չեղաւ զիս պաշտօնատեղիս դրկելու մասին, ինչպէս ծանօթ է նաեւ՝ թէ ի վերջոյ Վարչական Պատուիրակութեան մը հետ միասին, որ կը բաղկանար Ամեն. Մաղաքիա Արքեպս. Օրմանեանէ եւ Պրն. Գէորգ Էֆ[էնտի] Կիւրեղեանէ, Ապրիլ ամսոյ վերջերը մեկնեցանք Պոլսէն, պատուիրակութեան պաշտօնն ըլլալով, Ապրիլ 23 թուակիր Ս. Պատրիարք Հօր Վարչութեան որոշմամբ ինձ ուղղած գրութեան համաձայն, «Միաբանութեան մէջ տիրող երկպառակութիւնը բառնալով վանքը խաղաղեցնել եւ անոր ելեւմտական վիճակը

²⁸ Այսինքն Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը:

²⁹ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Ը, Ը979-Ը980:

քննել եւ ստուգել եւ ըստ այնմ Ընդի. Ժողովէն վաւերացեալ կանոնագիրը գործադրութեան դնել», աւելցնելով թէ՝ «Ազգ. Վարչութիւնը բանաւոր եւ պատշաճ դատած է որ ես եւս, իբրեւ ներկայացուցիչ Ընդի. Ժողովոյ, ընկերակցիմ Վարչական Պատուիրակութեան՝ կանոնագրին գործադրութեան վերոյիշեալ նախապատրաստական աշխատութեանց գիտակից ըլլալու եւ յետոյ ձեռնարկելու համար ի գործ, Ընդի. Ժողովոյ կողմէ ինձ տրուած իրաւասութեանց սահմանին մէջ»:

Ըստ այս հրահանգին, Մայիս 6էն ի վեր արդէն Երուսաղէմ գտնուելով, ճիշդ երեք շաբթուան բնակութենէ մը ետք Վանքին մէջ, կը փութամ ներկայիս տեղեկագրել Ազգ. Պատկ. Ժողովիդ հետեւեալը:

Վարչական Պատուիրակութիւնը, կամ աւելի ճիշդ Ամեն. Մաղաքիա Ա[րք]եպս. Օրմանեան, առ այժմ տակաւին միմիայն ելեւմտական վիճակի քննութեամբ զբաղած, կը յայտարարէ թէ մօտ ժամանակէն դեռ ոչ մէկ նոր կարգադրութիւն կարելի է կատարել: Համոզուած եմ թէ Միաբանութեան կողմէ իրեն ցոյց տրուած մեծարարից վերաբերումը ազդած է իր վրայ, որով մինչեւ իսկ փոխած է ճանապարհորդութեան միջոցին իր պարզած նախնական եւ աւելի անմիջական գործունէութեան ծրագիրը: Պէտք է աւելցնեմ թէ Միաբանութիւնը ի փոխարէն անգիտանալ կը ձեւացնէ, գէթ մեծամասնօրէն եւ իր գլխաւոր անդամներուն վարմունքով, Ազգ. Ժողովոյդ ներկայացուցիչը եղող անձին պաշտօնական գոյութիւնը վանքին մէջ եւ մասնաւոր խօսակցութեանց մէջ անոնցմէ մին նոյնիսկ կը ժխտէ անոր պաշտօնին օրինաւորութիւնը, եւ այժմ ի ներկայութեան Օրմանեան Սրբազանի, որ ո՛չ միայն չի հերքեր, այլեւ համամտութիւն կը յայտնէ յիշեալ միաբանին մէջ բերած պատճառաբանութիւններուն: Ըստ որում այս է իր տրամադրութիւնը՝ Օրմանեան Սրբազան ինք եւս Ներկայացուցչին պաշտօնին չի տար պատշաճ կարեւորութիւնը, որով յաճախ զանց կ'առնէ զայն ներկայացնել օտար պաշտօնական անձնաւորութեանց, ինչպէս տեղոյս Վսեմ. Կառավարիչին տրուած այցելութեան պահուն, եւ հիւպատոսներու իր տուած այցելութիւններուն համար ալ բոլորովին կը մոռնայ կանխաւ լուր տալ Ազգ. Ժողովոյ Ներկայացուցչին: Բաց աստի, կարգ մը խնդիրներու, ինչպէս Վարչութեան նախորդ պատուիրակ Պարգեւ Էֆ. Փափագեանի դէմ վերջին անգամ ցոյց տրուած եւ Ազգ. Կեդր. Իշխանութիւնը ոտնահարող անորակելի վարմունքին³⁰ մասին իր ցարդ պահած լռութիւնը կամ աւելի եւս նոյն ինքն խարազանահար վարդապետը ի կարգին միաբանութեան միւս անդամոց ճաշի հրաւիրելն եւ այդ դէպքին մասին անոր հետ կատակաբանելով խօսիլը, ինծի բաւական տարօրինակ կը թուի եւ շատ քիչ յոյս կը ներշնչեն թէ Ազգ. Պատկ. Ժողովիդ քուէարկած կանոնագրին ոգւոյն համաձայն կարելի պիտի ըլլայ նոր վիճակ մը ստեղծել Ս. Յակոբեանց վանուց մէջ, որով եւ ես պիտի կրնամ ինձ յանձնուած պաշտօնը արդիւնաւորապէս կիրարկել:

Եզրակացնելով, կը գտնեմ թէ՝ 1° Տակաւին երկար ժամանակ նախնական աշխատութիւններու տեսողութեան հեռապատկերը, եւ 2° Այդ աշխատութիւններուն ըստ իս աննպատակաբարձար եւ անուժ սկզբնաւորութիւնը, միանալով սա՛ պարագային թէ Ազգ. Ժողովոյ ներկայացուցիչը, հակառակ իր պաշտօնին կարեւորութեան, դեռ բաւական երկար ատեն պիտի մնայ առանց ոեւէ իրական իշխանու-

³⁰ Ակնարկութիւն պաշտօնական առաքելութեամբ Երուսաղէմ ուղարկուած ազգային երեսփոխան Պարգեւ Փափագեանի եկեղեցականի մը կողմէ խարազանահար եղած ըլլալու իրողութեան:

թեան՝ գրեթե իբրեւ հիւր մը վանքին մէջ, ինչ որ Ազգ. Պատկ. Ժողովոյդ հեղինակութիւնն ու վարկը նուազեցնելու միայն կը ծառայէ, եւ դարձեալ, նկատելով որ ամիսներու ընթացքին առանց ո՛րեւ օգտակարութիւն ունենալու վանքի սնտուկէն թոշակ ստանալը թէ՛ ես պիտի չկարենամ թոյլատրել ինքզինքիս եւ թէ՛ ապագային պիտի կրնայ իմ կողմէս իբրեւ շահադիտական արարք մը մեկնուիլ,- բոլոր այս պատճառներով՝ նախամեծար կը համարեմ, որքան կարելի է կանուխ, հրաժարիլ ինծի յանձնուած պաշտօնէն, յայտնել անոր վերջնական հանգամանքը եւ խնդրել միանգամայն որ Պատկ. Ժողովդ հաճի հաղորդել ինծի հրաժարականիս ընդունումը ըլլալը որպէսզի ժամ առաջ մեկնիմ այստեղէն:

Վերջացնելով, աւելորդ չեմ նկատեր յայտնել Պատկ. Ժողովոյդ, իբրեւ արդիւնք երեք շաբաթուան միջոցին կատարած քննութեանս, թէ կարելի եւ անհրաժեշտ է փութով գործադրութեան դնել նոր կանոնագիրն ամբողջովին, առ այդ կազմելով կամ վերակազմելով Կ. Պօլսոյ մէջ յատուկ խնամակալութիւնը եւ անուանելով նախատեսեալ վարչական պաշտօնէութիւնը: Առանց այս պայմանին, գուցէ ողորձ եւ ողորձիլ սիրող պատրիարք մը միայն յաջողի, առերեսոյթ հանդարտութեամբ մը եւ փոխադարձ համաձայնութեան դիւրաւ հաստատելի հիման մը վրայ, կառավարել Միաբանութիւնը որչափ ինք կենդանի է կամ զառամած չէ, որմէ ետք բնականաբար կրկին կը տիրէ նախկին վիճակը եւ անցեալին իբր աւանդ բերած վերքերն ալ ուեւ կերպով դարմանուած չեն ըլլար՝ այլ ծածկուած միայն:

Սպասելով որ բարեհաճիք շուտով հաղորդել ինձ պաշտօնէս արձակման լուրը եւ ցաւելով որ բովանդակ պատրաստականութեանս հակառակ՝ ինծի կարելի չեղաւ իրականացնել Պատկ. Ժողովոյ յայտնած վստահութիւնը որուն համար սակայն վերստին կը ներկայացնեմ խորին շնորհակալութիւնս,

Կը մնամ, Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի,

Ամենախոնարհ յարգանքօք,

Հրաժարեալ Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Երուսաղէմ,
Վահան Թէքեան³¹

Ե.

Երուսաղէմ, 5/18 Յունիս 1914

Մեծ. Տիար Հ[րանտ] Մամուրեան

Տնօրէն-խմբագրապետ «Դաշինք» օրաթերթի

Իզմիր

Ձեր թերթին 31/13 Մայիսի թիւը կը պարունակէ իբրեւ առաջին յօդուած Հայորդի ստորագրութեամբ Կ. Պօլսէն թղթակցութիւն մը, որուն իմ անձիս վերաբերեալ մասերը հետեւեալ կերպով ճշդութիւն կը կարօտին³²:

³¹ ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Ը, Ը981–Ը984:

³² *Դաշինքի* Ե. տարւոան 1470րդ համարով լոյս տեսած գրութիւնը կը կրէր «Ազգ. գործեր եւ գործիչներ Պոլսոյ մէջ» խորագիրը, Պոլսէն ուղարկուած 26 Մայիսին: Հոն, Հայորդի «Ազգային կատակերգութիւնը» ենթաբաժինը կը սկսէր Թէքեանը կոչելով Ազգային Ժողովին վաւերացուցած Երուսաղէմի կանոնագրին կատակերգութիւն մը եղող առաջին տեսարանին դերակատար, կը նշէր թէ կանոնագիրը կը կնճռոտէ Երուսաղէմի խնդիրը եւ հարց կու տար. «ճմարիւր զաւեշյ մը չէ՞ր Ազգ. Ժողովին ներկայացուցչին ուղեւորութիւնը դէպի Երուսաղէմ»: Հետաքրքրական զուգադիպութեամբ, տարի մը ետ երթալով, *Դաշինք* օրաթերթի 31/13 Մա-

Ձեր թղթակիցը ինձի համար կ'ըսե. «... երբ տեսա թե իր պաշտօնը վտանգուելու աստիճանին հասած է, գրեթե ամեն օր դիմում կատարեց Ս. Պատրիարքին մօտ եւ վերջերս նոյն իսկ սկսաւ պոռալ կանչել, ոչ թէ Ազգ. Ժողովին որոշումը գործադրել տալու նախանձախնդրութեամբ, այլ առարկութեամբ թէ ինք Կեսարիոյ մէջ իբրեւ տնօրէն իր ստացած 10 ոսկի ամսաթոշակը կորսնցուցած է եւ վնասուց հատուցում պիտի պահանջէ, եթէ Երուսաղէմ չդրկուի»:

Կը պատասխանեմ: Ազգ. Ժողովոյ Մայր Դիանին 18 Յունվ.ի պաշտօնագրէն ետք՝ Կեսարիոյ մէջ ստացայ Ս. Պատրիարքին 28 Յունվ.ի հեռագիրը որ Խառն Ժողովոյ որոշմամբ զիս Պօլիս կը հրաւիրէր, սապէ՛ս. «*Մաճկիսի ումումիի միլլեդէ[-] մէճկիսի մէզքիւր նամընա Գուրսը Շէրիֆ մանասթըրը նէզպիւնյոլէ վագիֆէի վէքեալէթէ ինթիխապ օլյորդընըզլան Իսթամպօլա հարէքէթինիզ մէճկիսի միլիթէլիթ գարարըրա թաւսիյէ օլընըր. էրմէնի Բաթրիքի Զաւէն*»³³:

Ես այս պաշտօնին թեկնածու եղած չէի ո՛չ պաշտօնապէս ո՛չ անպաշտօն կերպով, ո՛չ մէկ բարեկամի բառ մը գրած չէի թէ կը փափաքիմ ընտրուիլ, բայց ընտրութենէն ետք երբ վերոյիշեալ պաշտօնագրէն ու հեռագրէն զատ՝ ի միջի այլոց ստացայ Արամ Հալաճեան, Շահրիկեան եւ Սուլին Էֆէնտի]ներէ ստորագրուած հեռագիր մը որ շատ ջերմօրէն կը յանձնարարէր ընդունիլ ինձի տրուած պաշտօնը եւ կ'ապահովցնէր թէ բովանդակ ժողովին վստահութիւնն ու աջակցութիւնը պիտի վայելէի անոր գործադրութեան միջոցին, *ե՛ս որ համամիտ էի նոր Կանոնագրին՝* ընդունեցի յարգել Ազգ. Ժողովին կամքը, մանաւանդ որ թերթերուն մէջ հետեւած էի քանի մը շաբաթ ի վեր ներկայացուցիչի ընտրութեան մէջ Ազգ. Ժողովոյ կրած դժուարութիւններուն եւ տեսայ թէ հրաժարելովս ուրիշ բան ըրած պիտի չըլլայի բայց եթէ զայն նոր դժուարութեան մը մատնել եւ հացին իւր քսել, ինչպէս կ'ըսուի, Երուսաղէմի խնդրոյն տարիներէ ի վեր մնալուն աշխատող շահախնդիր խմբակի մը: Հետեւաբար՝ ընդունեցի տոյն պաշտօնը եւ Յունվ. 31ին Կեսարիայէն մեկնելով Փետր. 6ին Պօլիս հասայ, ուր ինքզինքս անմիջապէս Ս. Պատրիարքին եւ Խառն Ժողովին տրամադրութեան տակ դրի: Խառն Ժողովը յաջորդաբար երկու շաբաթ զիս ի նիստ հրաւիրեց. առաջինին՝ Ձեր Հայորդի թղթակցին այնքա՛ն սրտին մօտիկ

յիսի համարին առաջին յօդուածը եւս կը վերաբերէր սաղիմական վերքին՝ «Երուսաղէմի հնինուքը» խորագրով եւ Գ. Բ. ստորագրութեամբ, ուր յօդուածագիրը կը դատաւիտէր «գողութեամբ ու անորակելի *էրէպսիզութեամբ* [իմա՝ անկրթութեամբ]» ազգն զբաղեցնող արծաթասէր հոգեւորականները, բաժին մըն ալ հանելով Ազգային Կեդրոնական Վարչութեան դանդաղաշարժութեան՝ այդ հարցը լուծելու ուղղութեամբ: Հայորդին նոյն թերթին 11/24 Յունիսի 1479րդ համարով ալ նոյն խորագրին տակ գրելով Երուսաղէմի խնդրին մասին, ակնարկութիւն մը կը վերապահէ «անպաշտօն կերպով պատուիրակութեան ուղեկցած» Թէքէեանի, գրելով. «...երեւակայել որ, Վահան Թէքէեան,- որ կրնայ շատ բան գիտցած ըլլալ առանց սակայն վանական կեանքի իրադարձութիւններուն տեղեակ ըլլալու,- խորիմ'որդ պիտի տայ իր կեանքին մեծագոյն մասը վանքերու մէջ անցուցած Օրմանեան սրբազանին եւ ասոր համար վեց ամսուան մէջ 180 ոսկի պիտի ստանայ ազգին նիհար քսակէն...»:

³³ Ազգային Ընդհանուր Ժողով[-] Յիշեալ ժողովը ձեզ որպէս իր ներկայացուցիչը ընտրած ըլլալով Սուրբ Երուսաղէմի վանքին մօտ, Խառն Ժողովի որոշումով ձեր Պօլիս մեկնումը կը թելադրուի. Հայ Պատրիարք Զաւէն:

եղող Պեշկիթաշի խնդրով զբաղած՝ ան բնաւ չկրցաւ ինձմով զբաղիլ. երկրորդին՝ կարծիքի փոխանակութիւն մը միայն ըրաւ հետս եւ ուզեց թոշակի մասին պայմանս գիտնալ՝ զոր որոշելը ժողովին թողուցի: Ատկէ վերջ, սոյն Վարչութիւնը հրաժարեցաւ կամ հրաժարեցուցուեցաւ [sic!], եւ մինչեւ նորին ընտրութիւնը, վաւերացուիլն ու գործի ձեռնարկելը (որ բաւական ժամանակ տեւեց), գիտնալով թէ ապարդիւն է՝ ո՛րեւէ դիմում չըրի Ս. Պատրիարքին մօտ: Երբ նոր Վարչութիւնը գործի գլուխ եկաւ, այն ատեն էր որ Ս. Պատրիարքին գացի յիշեցնել փութով որոշում մը տալու պէտքը: Ատոր վրայ, երկո՛ւ թէ երեք նիստ ըրաւ Վարչութիւնը, առանց յիշելու եւ ոչ ալ իր նախագահին իրեն ի յուշ ածելու, թէ Ազգ. Ժողովին նախորդ Վարչութեան որոշմամբ ու ներկայ Պատրիարքին հեռագրով գաւառէն յատկապէս կանչուած եւ այդ որոշումներն ու հրաւէրը բանի մը տեղ դնելով հոնկէ եկած՝ պաշտօնեայ մը կը գտնուէր Պօլսոյ մէջ անելի քան երկու ամիսէ ի վեր: Ահա՛ երկիցս այս բանը ըսել գացի Ս. Պատրիարքին, առանց ոեւէ վնասուց հատուցում պահանջելու սպառնալիքի (քանի որ կար՝ Ազգին բարձրագոյն մարմնին որոշումը որով երբեք չէի կրնար «պաշտօնս վտանգուելու աստիճանին հասած» տեսնել[!]), ինչպէս կ'ենթադրէ թղթակիցդ, այլ պահանջելով որ «Ազգ. Ժողովին որոշումը գործադրուի», ինչպէս կ'ենթադրէր թէ ըրած ըլլամ Պատրիարքարանի նրբանցքներուն մէջ կ'երեւի սքտող բայց հակառակ պատերու ետեւէն լսելու իր ջանքին՝ ո՛չ այնչափ սուր ականջներ ունեցող Ձեր նոյն... Հայորդի թղթակիցը, որ «պօռալ-կանչելս» ալ լսած ըլլալ կը յաւակնի՝ նոր բայց սուտ ըլլամ³⁴ մըն ալ ընելով իր ականջներուն...: Պէ՛տք կայ հոս անլցնելու թէ Կեսարիոյ ամսաթշակս 10 ոսկի չէր, այլ 15, եւ թէ՛ հակառակ Ազգ. Ժողովոյ մէջ ընտրութեանս պահուն տրուած որոշման - զոր հաղորդեցին ինծի - թէ Ներկայացուցիչը եթէ պահանջէ՝ Վարչութիւնը պիտի չկրնայ մերժել մինչեւ 50 օսմ. ոսկի ամսաթշակ սահմանել անոր, ես առանց սակարկութեան ընդունեցի նոր Վարչութեան առաջարկած 30 ոսկի ամսաթշակը, որուն «դիւթական ազդեցութիւնը» Պատրիարքարանի մէջն ու շուրջը դեգերող եւ իբրեւ ո՛րեւէ տարտամ Յանձնաժողովի մը քարտուղար՝ շաբաթը մէկ քանի նամակ գրելու փոխարէն ամսական քանի մը ոսկի գրպանող սովալլուկ ծոյլ երիտասարդները միայն կը կրեն:

Գալով Ձեր թղթակցին այն տեղեկութեան թէ Ս. Պատրիարքը ստիպուեր է իմ սպառնալիքիս ներքեւ զիս «իբրեւ... կցորդ դրկել Օրմանեան Ս.ի նախագահութեան տակ Երուսաղէմ գացող վարչական պատուիրակութեան հետ» եւ թէ «Ազգ. Ժողովի պատուոյն ու իր անձնական արժանապատուութեան նախանձախնդիր ո՛չ մէկը պիտի յօժարէր այս ուղեւորութիւնը կատարել այսքան նուաստացուցիչ պայմաններու մէջ», թղթակիցն իր այս տողերով նախ՝ *արջի ծառայութիւն* մը կը մատուցանէ Ս. Պատրիարքին եւ Վարչութեան, որոնք Ազգ. Ժողովոյ որոշումը զեղչելով եւ ականայ գործադրած եւ զայն խաբած պիտի ըլլային այսպէսով. յետոյ՝ կը յայտնէ իր կատարեալ անգիտութիւնը Վարչութեան եւ իմ միջեւ կատարուած համաձայնութեան, որուն համեմատ ես եկայ Երուսաղէմ իբրեւ սոսկ ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ, այդ հանգամանքով՝ Վարչական Պատուիրակութեան գործերուն հետեւելու եւ բնականաբար տեսնելու՝ համար թէ այդ գործերը արդեօք իրապէս կը հարթեն կանոնագրի գործադրութեան ճամբան: Այս ըմբռնումը, որ Ազգ. Ժողովոյ զիս ընտրող զանազան խմբակցութեանց լիտըններուն³⁵ եւս - մէջը ըլլալով նաեւ Սահմ[անադրական] Ռամ-

³⁴ Ծանուցում:

³⁵ Պարագլուխներուն, ղեկավարներուն:

կավարներու խմբակցութիւնը, այո՛ւ՝ ըմբռնումն է, բնաւ չի նսեմացներ պաշտօնիս ներկայ բնոյթը. թերեւս զայն կը բարձրացնէ իսկ, եւ ամէն պարագայի մէջ, ե՛ս, համոզուած մը Կանոնագրին օգտակարութեան, շատ ատելի *լուայալ*³⁶ մարդու գործ է կարծեմ որ հսկեմ անոր գործադրութեան վրայ, քան թէ ատոր համոզուած չըլլայի ու խոստանայի - պիտի բռնէի՞ սակայն խոստումս - գործադրութեանը ճամբան հարթելու աշխատիլ:

Իսկ իմ «արժանապատուութեանս նախանձախնդրութիւնը» ո՛րեւէ դիմակաւոր ու չճանչցուելու համար յաճախ դիմակը փոխող սինքրորէ մը չէ որ ունենալ պիտի սորվիմ: Կ'զգամ որ չափազանց պատիւ է արդէն իրեն պատասխանելը: Յետոյ, իրաւունք չեմ տար այդ դիմակաւորին որ զիս իրեն աստիճանակից նկատելով՝ առանց ածականի իմ անունովս կոչէ զիս: Իրաւ է թէ այսպէս բարակ բաներու չի նայիր հիմա *Դաշինքը*, որուն էջերուն մէջ կ'սպասեմ միայն իրատարակուած տեսնել այս անձնական պատասխանս եւ կը մնամ յարգանօք

Վահան Թէքէեան³⁷

2.

Թէքէեանի վերոյիշեալ նամակը իր մաքրագիր տեսքով արդէն կը յուշէ կրկնօրինակ մը չըլլալը, միաժամանակ մղելով ենթադրելու թէ ան չէ դրկուած հասցէ-աւրիորդ:

Յիրաւի, Դաշինքի 17/30 Յունիս 1914ի 1484րդ համարով «Երուսաղէմի վարչական պատուիրակը» խորագրին ներքեւ կը հրապարակուի Թէքէեանի մէկ այլ՝ 6/19 Յունիսին գրած նամակը: Մամուրեան այդ առիթով խմբագրական նշումով կը գրէ, ի միջի այլոց, «Թէքէեան էֆ.ի ուղղամբութիւնն, անշահախնդրութիւնն եւ ազգին օգտակար ըլլալու ինքնաբեր փափաքն ամէն կասկածանքէ վեր է ... երբեք չպիտի թողլարէինք մեզի ամենաթեթեւ կերպով իսկ վիրաւորել զինք, նկատելով Թէքէեան էֆ. արտասահմանէն երկիր դարձող ամենէ մաքրոր, ամենէ պայծառ եւ ամենէ խղճամիտ յեղափոխականներէն մին»³⁸:

Ահաւասիկ այդ նամակը:

Երուսաղէմ, 6/19 Յունիս 1914

Մեծ. Տիար Հ. Մամուրեան
Տնօրէն-խմբագրապետ «Դաշինք»ի
Իզմիր

Չեմ գիտեր ի՞նչ տեսակ մտայնութեան մը տէր է Ձեր Պոլսոյ թղթակիցը որ զիս կը մեղադրէ Ազգ. Ժողովոյ մէկ որոշումը ընդունած եւ գործադրութիւնը հետապնդած ըլլալու համար: Իրեն պէս իր *քիթէն*³⁹ շատեր, ուղղակի եւ անուղղակի միջոցներով, մերթ վախցնել եւ մերթ յուսահատեցնել փորձելով, աշխատեցան, Կեսար-

³⁶ Ուղղամիտ, հաւատարիմ:

³⁷ ՊՏԴ, տուփ 9, թղթապանակ LMN51, Ը997-Ը998:

³⁸ Թէքէեան, որ իբրեւ 1908ին կազմուած Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան հիմնադիրներէն մին մէկէ ատելի առիթներով քննադատած է գէշ հասկցուած եւ գործադրուած յեղափոխութիւնը, պատահականօրէն անդամակցած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 1896ին եւ նոյն տարին թրքական հետապնդումներէ փախուստ տալով Եւրոպա անցնելէ ետք գործած էր որպէս Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան անդամ:

³⁹ Խմբակէն:

իայն Պոլիս դառնալէս մինչեւ Երուսաղէմ մեկնած օրս, որ ջուրը ձգեն նոր կանոնագրին ամենէն հիմնական մէկ տրամադրութիւնը, Ազգ. Ժողովին՝ ներկայացուցչի մը միջոցաւ վանքը այսուիտեւ ազգին հակակշռին տակ պահելու փափաքը: Ձեր թղթակցին կողմէ *Դաշինքի* հիւրընկալ սինակներուն գազաթէն վրաս նետուած նախատինքի եւ գրպարտութեան տիղմը այս *սթօքին*⁴⁰ մնացորդն է՝ հիմա, որ բացարձակապէս անտարբեր պիտի թողուր զիս եթէ միայն գնահատում (appréciation) պարունակէր եւ դէպքերն ալ չխեղաթիրէր:

Այսպէս, սուտ է որ «վերջերս սկսած ըլլամ ամէն օր դիմում կատարել Ս. Պատրիարքին մօտ ... նոյն իսկ պոռալ կանչել, ... եւ սպառնալ որ վնասուց հատուցում պիտի պահանջեմ եթէ Երուսաղէմ չդրկուիմ»:

Մօտ երեք ամսուան մէջ, մինչեւ մեկնումիս թուականին որոշուիլը, չորս անգամ գացեր եմ Ս. Պատրիարքին քով, անշուշտ յիշեցնելու համար թէ՛ ինքը իր հեռագրով զիս կանչած էր Կեսարիայէն որպէսզի Երուսաղէմ դրկէ եւ թէ պէտք էր վերջապէս գործադրել Ազգ. Ժողովին որոշումը: Պոռալ կանչելը Պատրիարքարանի մէջ եւ անկէ դուրս այս կամ այն Խորհուրդին կամ Յանձնաժողովին քարտուղարի անունով իբրեւ տգրուկ փակած այն գարշելի արարածներուն կը վայլէ որոնք հայ մամուլին մէջ ալ յաջողած են հոսք մը նետել եւ անոր յալիտենական արատը կը կազմեն:

Գալով «Օրմանեան Սրբազանի նախագահութեան տակ Երուսաղէմ դրկուելիք վարչական պատուիրակութեան իբրեւ կցորդ...» ընկերակցելու, Պօլսոյ թերթերը ժամանակին գրեցին արդէն թէ ես կու գայի միմիայն իբրեւ ներկայացուցիչ՝ Ազգ. Ժողովոյ, ինչպէս նոյնը որոշած ու պաշտօնապէս ինծի գրած ալ է Վարչութիւնը: Պիտի չկրնամ հոս ըսել, թէ նոյն ինքն Վարչութեան ատենապետին յանձնարարութեամբ, ի՞նչ կ'ընեմ եւ պիտի ընեմ այստեղ մինչեւ Կանոնագրի գործադրութեան սկզբնաւորութիւնը, բայց կրնամ յայտնել, թէ Կանոնագիրը կազմող եւ զիս ընտրող երեսփոխան ընկերներու մէկ կարեւոր մասը անպատճառ ուզած եւ պնդած է որ գամ Երուսաղէմ՝ Վարչական Պատուիրակութեան կատարած ներկայ աշխատութիւններուն վրայ ալ հսկելու համար:

Իսկ թէ «Կեսարիոյ մէջ 10 ոսկի ամսաթոշակ կ'առնէի» (Ձեր թղթակիցը այս պարագային 50 առ հարիւր միայն կը սխալի. ամսականս 15 ոսկի էր հոն) եւ թէ «30 ոսկի թոշակը դիպական ազդեցութիւն մը գործած է վրաս», չեմ զիջանիւր իսկ պատասխանելու: Միայն պէտք է ըսեմ այդ պարոնին, որ իմ ունեցած «անձնական արժանապատուութեան նախանձախնդրութեանս» մէկ ամենաչնչին մասն ալ եթէ ինք ունենար՝ նորէն մարդ մը կ'ըլլար, փոխանակ այն արհամարհելի, դուռնէ դուռ սլքտացող եւ բազմաթիւ ծածկանուններու տակ իր դէմքին տգեղութիւնը ծածկելու ստիպուած մարդուկին՝ զոր շատ որոշ տեսայ *Դաշինքի*... *Հայորդի* թղթակցին տողերուն ներքեւ:

Խնդրելով որ այս նամակս հրատարակէք Ձեր թերթին մօտաւորագոյն թիւին մէջ,

Մնամ յարգանքօք
Ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ
յերուսաղէմ
Վահան Թէքէեան

⁴⁰ Ապրանք (արհամարհական երանգով):

Է.

Երուսաղեմ, 11/24 Յունիս 1914

Ամեն[ապատիւ Մաղաքիա Ս. Արքեպս. Օրմանեան]
Լիազօր Պատ[ուիրակ] Ազգ. Կեդր. Վարչութեան
Աստ

Երկու օր առաջ յայտնած էի Ձեր Սրբազնութեան թէ բնակութիւնս վանքէն դուրս փոխադրելուս առթիւ՝ պէտք ունէի Պատրիարքարանի յարկաբաժնին մէջ գրասենեակի մը, ուր կարենայի մնալ ցերեկները: Ձեր Սրբազնութիւնը պատասխանեց որ «իրենց» դիմեմ. դիմեցի Պատր[իարքական] Տեղապահութեան Փոխ[անորդ]ի եւ Տնօրէն Ժողովոյ ատենապետի մատակարարի պաշտօնը վարող Գեր. Սարգիս Վրդ. Աճէմեանի, որ այն ատեն խոստացաւ մէկ-երկու օրէն յարմար կարգադրութիւն մը ընել, իսկ այսօր, հաւանօրէն որոշմամբ Տնօրէն Ժողովոյ, որ գումարուած է երէկ Ձեր Սրբազնութեան տակ, յայտնեց թէ այժմ տրամադրելի սենեակ մը չկայ: Այսօր այս պատասխանը բերանացի կերպով հաղորդեցի Ձեր Սրբազնութեան, աւելցնելով թէ տեղ չգտնուելուն առարկութիւնը ինծի համար անընդունելի պատրուակ մըն է. Ձեր Սրբազնութիւնը ոչինչ պատասխանեց:

Արդ, նկատելով որ Պատրիարքարանի մէջ ինծի գրասենեակ մը չյատկացնելը կը նշանակէ պարզապէս չճանչնալ իմ պաշտօնս եւ ինծի միջոց չտալ որ զայն գործադրեմ, եւ նկատելով որ ինծի համար կարեւոր է գիտնալ թէ արդե՞օք Միաբանութիւնն ալ այս կարծիքէ՞ն է թէ ոչ միմիայն Տն[օրէն] Ժողովի կամ Տեղ[ապահ] Փոխ[անորդ]ի եւ Ձեր Սրբազնութեան կարգադրութիւնով է այս,

Ներկայիս կը խնդրեմ որ հաճիք ընդ փոյթ (ըստ սովորութեան 1 օր առաջ, վաղը՝ հրաւեր ուղղելով՝ Ուրբաթի համար) Միաբանական ընդի. Ժողով գումարել եւ ինծի ալ ծանուցանել որպէսզի ներկայ գտնուելով պաշտօնիս վերաբերեալ պէտք եղած բացատրութիւնները տամ Ժողովին եւ անձամբ գիտնամ իր տրամադրութիւնը⁴¹:

Ը.

Երուսաղեմ, 12/25 Յունիս 1914

Ազն. Վահան Էֆ. Թէքէեան, ներկայացուցիչ եմ.

Ազնուամեծար սիրելի,

Երէկ գիշեր ձեռքս հասաւ յունիս 11/24 թուակիր գիրերնիդ, որուն կը փոխանակեմ պատասխանել:

Սենեակներու բաշխումը եւ անոնց կիրառութիւնը խնդիր մըն է, որուն ես չեմ խառնուած տակաւին: Իսկ վանքի մէջ սենեակ մը ունէիք դուք, եւ կրնայիք եւ կրնաք զայն պահել որեւէ կիրառութեան համար, առանց ատոր փոփոխութենէն խնդիրի պատճառ մը ստեղծելու:

Գալով ներկայացուցչութեան պաշտօնին, անձանօթ չէ Ձեր սիրելութեան, որ անիկա կապուած է նոր կանոնագիրի գործադրութեան մտնելուն եւ Կոստանդնուպոլ-

⁴¹ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը977-Ը978: Թէքէեան այս սեւագիր նամակին մաքրագիր օրինակը յանձնած է Օրմանեանի: Սեւագրին մէջ ջնջած է վերջին պարբերութիւնը, ուր կ'ըսուի. «Խնդրելով նոյնպէս որ այս մասին Ձեր որոշումը հաճիք ժամ առաջ ինձ իմացնել որպէսզի ըստ այնմ Ազգ. Երեսփ. Ընդի. Ժողովոյ արժանապատուութեան համաձայն պարտականութիւնս փութով կատարեմ Մնամ խորին յարգանքօք»

սոյ մէջ խնամակալութեան մը գործի սկսելուն հետ: Իսկ Կեդրոնական Վարչութիւնը, Ազգային Ընդհանուր Ժողովոյ համաձայնութեամբ, անկէ առաջ պատուիրակութեան միջոց ժամանակի մը կարգադրեց, դժուարութիւնները հարթելու եւ գետինը պատրաստելու համար. եւ այդ միջոցն է, որ կը տեսնուէր տակաւին:

Իսկ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարելու պատեհը՝ պատուիրակութեան խոհականութեան եւ գնահատութեան պատկանող մի կէտ է, եւ համարձակ պիտի յայտարարեմ, թէ տիրող մտայնութեան եւ շարունակուող կացութեան պարագաները զիս չեն քաջալերեր՝ գործը այսպիսի փորձի մը ենթարկել:

Ողջունիւ սիրոյ մնամ Ազնուութեանդ աղօթարար

Մաղաքիա Օրմանեան⁴²

Թ.

Երուսաղէմ, 12/25 Յունիս 1914

Ամեն. Մաղաքիա Ս. Արքեպս. Օրմանեան

Լիագոր Պատուիրակ Ազգ. Կեդր. Վարչութեան

Աստ

Ի պատասխանի Ձեր Սրբազնութեան այսօրուան թուականով գրութեան, կը փութամ յայտնել թէ պաշտօնիս ճանաչումը եւ գործադրութիւնը երկու տարբեր խնդիրներ են որոնք իրարու հետ չեն շփոթուիր: Պատուիրակութեանդ տրուած միջոց ժամանակին կը վերաբերէր Կանոնագրի գործադրութեան եւ ո՛չ թէ պաշտօնիս ճանաչման՝ որ առաջին օրէն իսկ պէտք էր կատարուած ըլլաւ: Յարդ վանքին մէջ բնակութիւնս անորոշութեան մը տեղի տուած ըլլալով՝ այժմ Պատրիարքարանի կողմը սենեակի մը յատկացման խնդիրն է որ կը ճշդէր կացութիւնը եւ ինծի փափաքելի կ'ընէր գիտնալ բովանդակ Միաբանութեան եւ ոչ թէ առժամեայ Փոխանորդի մը կամ Տնօրէն Ժողովոյ մը, որոնք իրապէս եւ օրինապէս պաշտօնէ դադրած պիտի ըլլային պատուիրակութեան ժամանումովը, տրամադրութիւնը հանդէպ իմ պաշտօնիս: Իմ մասիս, այն իշխանութեամբ զոր ունինք, ոչ իսկ օր մը պիտի հանդուրժէի ոտնակոխ ընել տալ Ազգ. Գերագոյն Ժողովին հեղինակութիւնը եւ արժանապատուութիւնը՝ եթէ գիտնայի որ Միաբանութիւնը չի ճանչնար պաշտօնս: Ձեր Սրբազնութիւնը, մօտ ամիսուկէս ետքը, տակաւին ժամանակը եկած չի համարեր «տիրող մտայնութեանց եւ շարունակուող կացութեան մէջ», այս առաջին, պարզ բայց էական կէտն իսկ լուծելու: Կը համարձակիմ հարցնել կրկին, ինչպէս ասկէ առաջ մի քանի անգամներ ըրած եմ, եւ ա՛յս Ազգ. Կեդր. Վարչ.էն ինձ տրուած խորհրդակցական իրաւամբ, թէ մինչեւ հիմա ի՞նչ եղած է այդ «տիրող մտայնութիւնն ու շարունակուող կացութիւնը» փոփոխելու համար, եւ թէ՛ պարզ սենեակի մը խնդիրն մէջ անգամ մի քանիներու կամքին առջեւ խոնարհելով՝ է որ արդեօք կը յուսանք այդ փոփոխութիւնը կատարել:

Անշուշտ, Վանքի պաշտօնական բաժնին՝ Պատրիարքարանի մէջ՝ սենեակ մը կարենալ ունենալու համար Պօլսոյ խնամակալութեան կազմուած ըլլալը հարկ չէր: Գալով Ձեր հրաւերին՝ որ է վերստին գրաւել նախորդ թողած սենեակս, պէտք է յայտնեմ որ իբրեւ հիւր կամ իբրեւ ուխտաւոր եկած չըլլալով այստեղ, պիտի չկրնամ այլեւս շարունակել այդ հանգամանքով Վանքը մնալ, որով անմիջապէս պիտի մեկնիմ դէպի Պօլիս, պատասխանատուութեան տակ աւելի երկար չմնալու համար:

Մնամ խորին յարգանքօք

⁴² ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Ը, Ը995:

Ժ.

Երուսաղէմ, 13/26 Յունիս 1914

Ազն. Վահան Էֆ. Թեքեան, ներկայացուցիչ են.

Ազնուամեծար սիրելի,

Երէկ գիշեր ձեռքս հասաւ նոյն օրուան 12/25 թուակիր գրութիւննիդ: Իմ նամակիս պատասխանելով կը գրէք թէ պաշտօնը ճանչնալ եւ գործադրութեան սկսիլ տարբեր են, թէ սենեկի խնդիրը նշանակութիւն ունի, եւ թէ մտադիր էք Կ. Պօլիս դառնալ պատասխանատուութեան ներքեւ չմնալու համար: Առանց երկարաբանութեանց մէջ մտնելու՝ համառօտիւ կը պատասխանեմ:

Ձեր պաշտօնին հրատարակութիւնը արդէն կատարուեցաւ Մայիս 12ի միաբանական գումարման առջեւ, պատրիարքական պաշտօնագիրն ալ կարդացուեցաւ, ուստի չեմ իմանար թէ ինչո՞ւ ինքզինքնիդ չներկայացած եւ չճանչցուած կը նկատէք:

Ասկէց անդին ըլլալիքը պաշտօնի կիրառութիւնն էր՝ Ազգ. Ժողովի որոշմանց գործադրութեամբ, որ՝ ինչպէս դուք ալ կ'ընդունիք, պատուիրակութեան տրուած միջոց ժամանակիէն ետքը տեղի պիտի ունենար:

Սենեակին խնդիրը պատահական պարագայ մըն է, զի եթէ բնական սենեակնիդ չնուագէք Ձեր պաշտօնը անցեալ ամսուան մէջ եւ չարգիլեց պաշտօնապէս կամ կէս պաշտօնապէս դիմումներ ընդունիլ եւ խորհրդակցութիւններ կատարել, տարբեր հետեւանք չէր ունենար ասկէ ետքն ալ:

Կոստանդնուպոլիս մեկնիլնիդ կամ մտադրութիւննիդ Ձեզի վերաբերեալ գործ մըն է, եւ ես իմ վրայ միջամտութեան կամ դիտողութեան իրաւունք չեմ զգար. միայն թէ եղելութեանց կարգին օրինական պահանջները յարգուած ըլլալով, կը կարծեմ թէ պատասխանատուութեան տեղի փնտռել անելորդ կը լինի:

Ողջունիւ սիրոյ մնամ սիրելութեանդ աղօթարար

Մաղաքիա Օրմանեան⁴⁴

ԺԱ.

Երուսաղէմ, 14/27 Յունիս 1914⁴⁵

Ամենապատիւ Տէր Զաւէն Սրբազան Արքեպիսկոպոս Տէր Եղիայեան

Պատրիարք Հայոց Թուրքիոյ, Նախագահ Ազգային Կեդրոնական

Վարչութեան Պատկառելի Խառն Ժողովոյ

Կ. Պօլիս

Սրբազան Հայր,

Ամսոյս 12/25ի երեկոյեան հետեւեալը հեռագրեցի Ձեզ. «Impossible et inutile rester, fait nouveau, partira par bateau prochain»⁴⁶: Այս առաւօտ ի պատասխան ստացայ Ձեր Սրբազնութեան երէկի թուականաւ սա հեռագիրը. «Partez pas, écrivez

⁴³ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Ը, Ը994: Նամակը գրուած է Երուսաղէմ գտնուող Hotel Fast պանդոկի նամակաթուղթին վրայ:

⁴⁴ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Ը, Ը992:

⁴⁵ Թեքեան այս սեւագրութեան մէջ գործածած է բազմաթիւ յապաւումներ: Խուսափելու համար բազմաթիւ անկիւնաւոր փակագիծերով վերարտադրութիւնը խճողելէ, յապաւումները փոխարինած ենք ամբողջական բառերով:

⁴⁶ Անկարելի եւ ապարդիւն է սպասել, նոր իրողութիւն, պիտի մեկնիմ յաջորդ նաւով:

causes, attendez lettre.»⁴⁷:

Նախ կու գամ յայտնել թէ Ձեր հրահանգին համաձայն յետաձգեցի վաղն իսկ այստեղէն Եաֆա եւ իոնկէ Եգիպտոսի ճամբով Պօլիս մեկնելու որոշումս, թէպէտ չեմ յուսար որ այս յետաձգումը ոեւէ օգտակարութիւն ունենայ:

Գալով հեռագրին պատճառներուն, անոնց ամէնուն թուումը երկար պիտի տեւէ, բայց պարտական եմ առանց վերապահութեան ամէնքն ալ շարադրելու: Պատկառելի Վարչութեանդ պատուիրակներէն Գ. Կիրեղեան էֆ., որ այժմ վերադարձած ըլլալով Պօլիս յուսամ երէկի Խառն Ժողովոյ նիստին ներկայ էր եւ տեղեկացաւ հեռագրիս, արդէն գիտակ է այդ պատճառներէն մէկ մեծ մասին, այսուհանդերձ, որպէսզի միմիայն անոնց վրայ չհիմնուի Պատկառելի Ժողովը, ներկայ որոշումս բացատրելու համար, հարկ համարեցի fait nouveau բառերը աւելցնել, որոնք կը հետեւցնեն թէ հասկցուած են եւ այդ է որ «պատճառները» կը հարցնէք Ձեր հեռագրաւ:

Սոյն բոլոր պատճառները թուելէ առաջ, աւելորդ չեմ նկատեր սա՛ ալ յայտնել թէ Կիրեղեան էֆ.ի մեկնումէն ուր օր առաջ, արդէն, մանրամասն բացատրութիւններ պարունակող հրաժարագիրս խմբագրած էի եւ պիտի դրկէի Ազգային Ժողովին, երբ Կիրեղեան էֆ. ջերմօրէն ստիպեց չդրկել զայն, խոստանալով թէ՛ այստեղ եւ թէ՛ ի Պօլիս վերադարձին կացութիւնը հասկցնել եւ բառնալ գանգատանացս պատճառները, որոնց իրաւացիութիւնը ինքն ալ լրիւ կ'ընդունէր:

Արդ, մինչեւ նոր եղելութեան պատահումը, գանգատներս հետեւեալ կերպով կ'ամփոփեմ:

1.- Վարչական Պատուիրակ Ամենապատիւ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան օտար պաշտօնական անձնատրութեանց առջեւ կ'ուզէ անշուք եւ անձանօթ պահել Ազգային Ժողովի ներկայացուցիչը: Ատոր ապացոյց՝ Ա. Կառավարական եւ կրօնական օտար հաստատութեանց մեր տուած այցելութեանց միջոցին՝ մէկ քանի անգամ նախ զայն բնաւ չներկայացնելը, յետոյ իմ պահանջամբս միայն մէկ անգամ եւ միայն անունս տալով ներկայացնելը եւ յետոյ կրկին այս կարեւոր ձեւակերպութիւնը մոռնալը: Բ. Հիպատոսներու այցելութեան նախապէս առանձին երթալը, որմէ յետոյ, իմ դիտողութեանս վրայ, լուր տալէ եւ Գերման ու Աւստրիական հիպատոսարանները միասին այցելելէ ետք՝ վերջին անգամ կրկին Իտալական հիպատոսին իր տուած առաջին այցելութիւնը մինակ կատարելը:

2.- Օրմանեան Սրբազան նոյնքան եւ աւելի անշուք եւ անկարեւոր կ'ուզէ անցընել Ներկայացուցիչին պաշտօնն ու ներկայութիւնը Միաբանութեան մօտ: Ապացոյց՝ Ա. Նորին Սրբազնութեան յայտնեցի թէ Միաբանութեան այժմ գործի վրայ գտնուող եւ հեղինակատու նկատուած անդամները, որոնք ջերմ վերաբերում ցոյց կու տան իրեն եւ ինքն ալ անոնց, չեն փոխադարձած իմ իրենց տուած այցելութիւններս: Սրբազանը ոչ իսկ պատասխանեց այս դիտողութեանս եւ անշուշտ բան մըն ալ չուզեց ընել այս զանցառութիւնը դարմանել տալու համար: Բ. Նորին Սրբազնութիւնը Կեդրոնական Պատկառելի Իշխանութեանդ պաշտօնագիրը ընդհանուր Միաբանութեան կարդալէ ետք երբ զայն մեկնաբանեց իր կողմէ ընդարձակ ճառախօսութեամբ մը, հազիւ ամենաթեթեւ կերպով անցողակի յիշատակութիւնն ըրաւ Ներկայացուցիչին եւ անոր պաշտօնը հաստատող կանոնագրին, ինչ որ հեռու էր անշուշտ Միաբանութեան վրայ տպաւորիչ ազդեցութիւն մը ընելէ եւ ըստ այնմ նկատել տալէ անոր ներկայութիւնը: Գ. Օրմանեան Սրբազանի ամենէն աւելի

⁴⁷ Մի հեռանաք: Գրեցէք պատճառները: Սպասեցէք նամակի:

վատահոսությունն ու համակրանքը գրաւող եւ Միաբանութեան մէջ այժմ ամենէն կարեւոր կամ ազդեցիկ անդամը նկատուող Դաւիթ Վրդ. Տէրտէրեան (լուսարարապետ) երբ գիշեր մը յետ ճաշու խօսակցութեան ընթացքին, հակառակ ինձ հանդէպ մինչեւ այն ատեն իր պահած վերապահութեան մղուեցաւ կանոնագրի մասին իր սկզբունքային հակառակութեան պատճառները պարզելու եւ ես հետզհետէ կ'աշխատէի ջրել զանոնք, Օրմանեան Սրբազան, ինձ համար բոլորովին ապշեցուցիչ միջամտութեամբ մը սկսաւ Վարդապետին տեսութեան ուժ տալ եւ այս՝ այնքան բոլորն համոզումի թափով մը, որ լաւագոյն համարեցի տեղի տալ եւ լռել քան թէ շարունակել վիճաբանութիւնը, որ գայթակղութեան մը հանգամանքը կ'առնէր: Կիւրեղեան էֆ. ներկայ էր այս միջադէպին եւ արդէն բոլոր այս դէպքերը յիշատակուած էին առ Ազգային Ժողով ուղղած եւ չորկաժ հրաժարագրիս մէջ:

3.- Օրմանեան Սրբազան կ'ուզէ Ներկայացուցիչը հեռացած տեսնել հոսկէ: Ապացոյց՝ Երբ հոս հասնելէ 2 շաբաթ վերջ, տեսնելով որ դեռ ոեւէ գործի սկզբնատրութիւն չկայ, յայտնեցի թէ կը խորհիմ 7-8 օր Դամասկոս եւ Պէյրութ այցելել, փութաց պատասխանել թէ լաւ կ'ընեմ եւ թէ այդ առթիւ նոյն տեղերու տեսչութեանց հաշիւները ու վիճակը քննելու պաշտօնն ալ կրնամ կատարել: Այն ատեն հետեւանք չտուի այդ դիտարկութեանս: Վերջէն, Կիւրեղեան էֆ.ի ներկայութեամբ, կրկին նոյն փափաքը յայտնեցի դիտումնաւոր կերպով: Կիւրեղեան էֆ. ընդդիմացաւ: Օրմանեան Սրբազան Կիւրեղեան էֆ.ի ընդդիմութեան ընդդիմացաւ մինչեւ զայրանալու եւ ինքիւրմէ ելլելու չափ, այդ առթիւ անարժան միջոց մըն ալ փորձելով եւ ըսելով ինձ թէ «Կ'ուզե՛մ Կիւրեղեան էֆ.ի հպատակի»: Գոհ էի այս լուսաբանութենէն, եւ Կիւրեղեան էֆ.ի այն հաւաստումին վրայ թէ պիտի սկսէին գործելու, որով իմ ներկայութիւնս ալ պէտք պիտի ըլլար, դարձեալ հրաժարեցայ ճամբորդելու գաղափարէն, յայտնապէս դժգոհութիւն պատճառելով Սրբազանին:

4.- Պատկառելի Վարչութեան Լիազօր Պատուիրակ Օրմանեան Սրբազան, որ ամէն իշխանութիւն ունի իր ձեռքը գտնուած պաշտօնագրերուն ուժովը վանքին վարչութիւնը ձեռք առնելու եւ այդպէս ալ յայտարարեց թէ պիտի ընէ, եւ այդ իշխանութեամբ փոխեց ալ արդէն Ելեւմտից Տեսուչը, այժմ եւ ատկէ դուրս՝ կը զգուշանայ սովորական կացութեան ոեւէ միջամտութիւն ընելէ: Պատրիարքութեան առժամեայ հանգամանքով ընտրուած եւ 2½ տարիէ ի վեր գործող Տնօրէն Ժողովը կը ճանչնայ օրինաւոր եւ կը թողու պաշտօնավարել: Տեղապահի Փոխանորդ Սարգիս Վարդապետ Աճեմեանը, որուն պաշտօնն իբրեւ այլեւս անելորդ պիտի դադրէր, ինչպէս մեր հոս գալէն օր մը վերջն ալ մեզ ըսած էր, կը պահէ միշտ պաշտօնի վրայ սա՛ն անհիմն առարկութեամբ թէ պաշտօնատանց եւ դրամատանց մօտ իր ստորագրութիւնը ճանչցուած է: - Տարակոյս չկայ որ երբ Պատուիրակութեան հոս գալէն մօտ 1½ ամիս ետքը տակաւին բոլոր գործերը ըստ առաջնոյն առանց հսկողութեան եւ առանց օրէնքի կ'ընթանան, Պատուիրակութեան եւ իրեն հետ նաեւ Կեդրոնի ազդեցութեան նշանակութիւնը չափազանց կը տկարանայ: Այս՝ ներկայի ընթացիկ գործերու համար: Գալով հիմնական վերակազմութիւն մը կատարելու մտօք ձեռնարկներու, կը ցաւիմ ըսել թէ այս մասին ալ ոչինչ կատարուած է, եթէ նկատի չառնենք բնաւ անմիջական օգտակարութիւն չունեցող եւ միմիայն կարծես ժամանակ անցնելու համար կազմակերպուած վերջին 8-10 տարուան հասութիւց եւ ծախսոց ի նորոյ արձանագրութեան երկար եւ դանդաղ գործողութիւնը: Վատաւորէն գիտեմ թէ իրաց վիճակին այսպէս պահպանումը ջղագրգռութիւն եւ յուսահատութիւն միայն յառաջ բերած է գրեթէ ամբողջ Միաբանութեան մէջ, բացի մէկ քանիներէ, ո-

րոնք յարաժամ շրջապատած են Սրբազանը եւ որոնց տրամադրութեան եւ խորհուրդներուն միայն կարեւորութիւն կու տայ ինք: Այս առթիւ յիշեմ հոս շաբաթ մը առաջ իրեն հետ ունեցած խօսակցութեանս միջոցին, յորում կը յայտնէի գործելու պէտքը, իր տուած սա՛ պատասխանը թէ «առիթի պէտք է սպասել մէկիկ մէկիկ նորութիւններ մտցնելու համար», ինչ որ, եթէ տարբեր նկատումներու ալ ծնունդ չըլլար, պիտի նշանակէր գէթ որոշ ուղղութեան մը արտայայտութիւնը. ուղղութիւն՝ որ սակայն անօգուտ եւ վտանգաւոր է միանգամայն, ըստ որում Միաբանութեան ստուարագոյն մեծամասնութիւնը պատրաստ էր կտրուկ գործողութիւններու հանդէպ գտնուելու, եւ ինչ որ ալ ըլլային՝ զանոնք ընդունելու, միմիայն այն պատճառաւ որ կը փափաքէր մի քանի մենաշնորհեալները ինկած տեսնել, հոգ չէ թէ ի փոխարէն ինքն ալ նոր կարգ-կանոնի լուծին տակ մտնէր: Այս հոգեբանական վայրկեանը գրեթէ անցած է, կամ անցնելու վրայ [է], եւ վաղը դժբախտաբար շատ ուշ պիտի ըլլայ, կը վախճամ, Կեդրոնի իշխանութիւնը ամբողջովին յարգելի ընծայելու համար:

5.- Օրմանեան Սրբազան առհասարակ բոլոր միաբաններու հանդէպ իր կատալոգ վարմունքովը եւ մի քանիներու հանդէպ իր ծայրայեղօրէն մտերիմ վարմունքովը, նախ վտանգեց Կեդրոնին հեղինակութիւնը ամէնուն վրայ եւ երկրորդ բոլուն նախանձ եւ դժգոհութիւն ստեղծեց մեծամասնութեան քով հանդէպ այդ մէկ քանիներուն, որով նաեւ անվստահութիւն հանդէպ Կեդրոնին: Ապա, Ա. երբ Պարզեւ էֆ. Փ[ափազեանը] խարազանահարող վարդապետը առաջին անգամ իր սենեակը այցելութեան եկաւ, Սրբազանը ծիծաղելով ըսաւ թէ «Արդեօք փայտ չունի՞ դարձեալ ծոցը եւ իրեն ալ պիտի չգարնէ՞», Բ. Վարդապետի մը պաշտօն տուաւ վանքին գոյքերը ցուցակագրելու. վարդապետը խստիւ մերժեց, պահանջելով նախապէս իր ունեցած պաշտօնէն արձակման քննութիւնը կատարել, եւ ըսաւ թէ զինք <...> շրջապատողները իր վրայ ազդեցութիւն կը բանեցնեն գործել չտալու համար: Գ. Ուրիշ վարդապետ մը, Հրեշտակապետացի տեսուչ Սամուէլ Վարդապետ, եկաւ խնդրել որ Սրբազանը պաշտօնէն արձակէ զինք եւ հրաման տայ օղափոխութեան երթալու: Սրբազանը տուաւ այդ հրամանը, բայց վարդապետը այնուհետեւ էր որ սկսաւ իր գանգատները յայտնել. «Գործ չես տեսներ», «քուկիներդ քեզի ինչպէս կը հասկցնեն այնպէս կ'ընեն», եւայլն ըսել: Այդ հրաժարող վարդապետին պաշտօնը յանձնել ուզեց ուրիշի մը՝ Թովմա Վարդապետի, որ զանազան առարկութիւններով մերժեց, թէպէտ Սրբազանը կը կարծէր թէ այս վարդապետը աւելի համակերպող պիտի ըլլար իրեն: Ե. Այժմ մեկնումի հրաման ստացած եւ Սրբազանին անհաճոյ վարդապետներու թիւը 4ի յանգած է, մինչ Փոխանորդ Սարգիս Վարդապետը, որ նոյնպէս հրաման ուզեց մի քանի օր առաջ մեկնելու, չստացաւ այդ հրամանը, եւ անշուշտ պէտք չէր որ ստանար, թէպէտ միաներուն այնքան դիւրաւ արտօնութիւն տրուիլը կասկածները շեշտած է թէ Սրբազանը կ'ուզէ իրեններով միայն մնալ, հեռացնելով անոնց դէմ գանգատ ունեցողները:

6.- Օրմանեան Սրբազան կը սիրէ վանքէն դուրս եւ ներս զուարճութիւններ կազմակերպել, որոնց հրաւիրուած են միշտ եւ միայն իր նախընտրած մէկ քանի վարդապետները: Պարոն Տէրի պարտէզին հացկերոյթէն ետք, այս շաբթու կրկին, նոյն ընկերներով եւ այս անգամ վարժարանի աշակերտներն հետն ունենալով գացած են Համբարձման բլուրը ճաշելու: Ասոր հետեւանքը եղած է Միաբանութեան մտքին մէջ աշխատութեան եւ լրջութեան գաղափարին թուլնալը, նախանձին արծարծումը եւ այն քննադատութիւնը թէ ելեմուտքը հաւասարակշռելու պաշտօնն ունեցող Կեդրոնի պատուիրակը առայժմ իր հաճոյքին համար ծախսելէ զատ ուրիշ բան չ'ըներ:

Արդ, բոլոր այս իրողությունները գոյություն ունեին արդեն, շատերը ծանօթ էին Կիբեղեան էֆ.ի եւ այն 1-2 փորձերը զորս ըրի իր մեկնումէն ետք Սրբազանին հասկցնելու թէ իր այս ուղղութիւնը դժգոհութիւններ միայն կ'ստեղծէ եւ ձախողութեան միայն կ'առաջնորդէ, բոլորովին ապարդիւն եղած էին, երբ երեք օր առաջ պատահած նոր դէպք մը ստիպեց զիս վերջացած նկատելու համբերութեան շրջանը եւ վճռական քայլ մը առնելու: Այդ դէպքը հետեւեալն է:

Վանքին մէջ բնակութիւնս բնակարանով, ծառայութեամբ եւ կենցաղով այլեւ անկարելի գտած եւ այս շաբթու սկիզբէն փոխադրուած էի պանդոկ ամսական 10 ոսկոյ վճարմամբ մը: Մեկնած օրս յայտնեցի Սրբազանին թէ Պատրիարքարանի բաժնին մէջ գրասենեակ մը կ'ուզէի ունենալ՝ ցերեկները գալու եւ եթէ ոչ առայժմ աշխատելու՝ գոնէ նստելու համար: Սրբազանը դժկամակութեամբ պատասխանեց որ «իրենց», այսինքն Փոխանորդին կամ Տնօրէն Ժողովին դիմեմ: Յայտնեցի Փոխանորդ Սարգիս Վարդապետին, որ խոստացաւ տրամադրելի քանի մը սենեակներէն մին 2-3 օրուան մէջ պատրաստել տալ: Յաջորդ օրը Տնօրէն Ժողովը գումարուած է Օրմանեան Սրբազանի նախագահութեամբ (բացառաբար) եւ միւս օրը՝ Չորեքշաբթի, երբ Սարգիս Վարդապետին հարցուցի սենեակի խնդրոյն հետեւանքը, պատասխան ստացայ թէ տրամադրելի սենեակ չկայ, որովհետեւ Եղիշէ Եպիսկոպոս, որ վանքին մէկ ուրիշ կողմը կը բնակի, Պատրիարքարանի իր նախապէս ունեցած երկու սենեակներէն վերջերս թողած մէկ հատն ալ ետ պահանջած է ... ձմեռը հոն բնակելու համար, եւ ասոնցմէ դուրս փոքր սենեակն ալ, զոր ի հարկին ընդունելու պատրաստ ըլլալս յայտնած էի, պիտի չկրնայ ինծի բացուիլ, որովհետեւ մէկ երկու ծառայող միաբաններ կը նստին հոն: Այս մերժումը Սրբազանին հաղորդեցի, որ «ինչ ընենք, տեղ չկայ եղեր»ի պէս պատասխան մը տուաւ նեղուած շեշտով մը: Ըսի թէ «պատրուակ է եւ սխալ է տեղ չըլլալը». ա'լ չխօսեցաւ, ոչ ալ ես: Նոյն իրիկունը պանդոկէն նամակ մը դրկեցի Սրբազանին, եւ ըսելով թէ «Պատրիարքարանի մէջ ինծի գրասենեակ մը չտալը կը նշանակէ պարզապէս չճանչնալ պաշտօնս եւ միջոց չտալ գործադրելու», թէ «ինծի համար կարեւոր է գիտնալ թէ Միաբանութիւնը արդեօք այս կարծիքէն է մեծամասնութեամբ թէ ոչ՝ միմիայն Տնօրէն Ժողովոյ, կամ Փոխանորդին, կամ Ձեր Սրբազնութեան կարգադրութիւնն է», կը խնդրէի «ընդ փոյթ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել եւ ինծի ալ ծանուցանել որպէսզի ներկայ գտնուելով պաշտօնիս վերաբերեալ անհրաժեշտ բացատրութիւնները ժողովին տամ եւ անձամբ գիտնամ Միաբանութեան տրամադրութիւնը»: Այս նամակիս Սրբազանը պատասխանեց թէ «սենեակներու խնդրով ինք չգբաղիր, թէ կրնայի նախորդ սենեակս պահել, թէ ներկայացուցչական պաշտօնիս գործադրութիւնը կապուած է Պօլսոյ մէջ խնամակալութեան գործի սկսելուն հետ. թէ Կեդրոնին կողմէ պատուիրակութեան միջոց մը տրուած ըլլալով գետինը պատրաստելու՝ այդ միջոցը տակաւին կը տեւէ, եւ թէ, վերջապէս, [Միաբանական] Ընդհանուր Ժողով գումարելու պատեհը պատուիրակութեան խոհականութեան եւ գնահատութեան թողուած ըլլալով, տիրող մտայնութեան եւ շարունակուող կացութեան պարագաները զինք չեն քաջալերեր գործը այսպիսի փորձի մը ենթարկել»: Նոյնիսկ պատասխանեցի հետեւեալը.

«Պաշտօնիս ճանաչումը եւն...»⁴⁸: Այս նամակը դրկելէ ետք երբ մինչեւ երեկոյ

⁴⁸ Կը թուի թէ Թեքեան արտագրած է բովանդակութիւնը 12/25 Յունիս թուակիրի համապատասխան պարբերութեան:

ոելէ պատասխան չեկաւ (ճիշդ Համբարձման բլուր գացած օրերնին էր), ծանօթ հեռագիրս տուի Ձեր Սրբազնութեան: Յաջորդ առաւօտուն Օրմանեան Սրբազան կը պատասխանէր հետեւեալը. «Ձեր պաշտօնին հրատարակութիւնը եւն...»⁴⁹: Իսկ ես աւելորդ նկատեցի այլեւս այս նամակին պատասխանել, միայն պէտք կ'զգամ Ձեր Սրբազնութեան եւ Պատկառելի Ժողովիդ յայտնելու թէ «պաշտօնապէս կամ կէս պաշտօնապէս դիմումներ ընդունիլ եւ խորհրդակցութիւններ կատարելը» կը վերաբերի մի քանի դժգոհ վարդապետներու սենեակս տուած այցելութեանց, որոնց հետ ունեցած խօսակցութիւնս կրկնած եմ միշտ սակայն Սրբազանին, երբեք զիրենք չեմ քաջալերած մինչեւ այժմ, եւ երբեք Սրբազանին հետ տարակարծութիւն մը յայտնած չեմ մինչեւ երէկ: Գալով Պօլիս մեկնելու յայտարարութեանս տուած պատասխանին, անիկա անգամ մը եւս կը յայտնէ եւ կը հաստատէ ինչ որ գրեցի արդէն վերերը:

Արդ, այստեղ գալէ, Երուսաղէմի մէջ ազգին դիրքը, վանքին հարստութիւնը եւ կարեւորութիւնը տեսնելէ ետք, բոլորովին կը խղճամ ներկայ կացութեան վրայ եւ աւելի քան երբեք կ'ուզեմ դիւրացնել ոելէ կերպով անոր կարգադրութիւնը: Այս պատճառով, հակառակ պարտականութեանս, կ'զգուշանամ դեռ խնդիրը Ազգային Ժողովին հանելէ: Բայց խորապէս համոզուած եմ որ այս ընթացքին շարունակութիւնը ոչինչ չի լուծեր, ընդհակառակը աւելի կը վատթարացնէ կացութիւնը: Սա՛ ալ ըսեմ, թէ Օրմանեան Սրբազանի ընթացքին գաղտնիքին շատոնց թափանցած եմ. իմ դիրքս չէր ներքոյ այդ մասին իրեն յոյսեր ներշնչել, ինչպէս իմ ներկայութեանս քանիցս ըրին իր մտերիմ վարդապետները՝ մեծ հաճոյք պատճառելով իրեն: Բայց թերեւս շատ ալ հեռու չէի նոյնը փափաքել, եթէ այս ուղղութիւնը չի բռնէր ինքն⁵⁰: Այդ գաղտնիքը այժմ բոլոր Միաբանութեան համար յայտնի եղած է, եւ ստուար մեծամասնութիւնը որ դժգոհ մնացած է ոչ թէ կատարուած գործողութիւններէն այլ գործողութիւն կատարուած չլլալուն համար, որոշապէս պիտի ընդդիմանայ այնպիսի բանի մը, զոր իր իրաւունքներուն բռնաբարումը կը նկատէ: Այսպէս, Սրբազանը, հակառակ իր խելքին՝ անգամ մը եւս կը սխալի իր փառասիրութեան եւ «զգուսիրութեան» պատճառաւ: Իրեն համար իսկ, երբ վերջնականապէս մնայ այստեղ, կացութիւնը չափազանց դժուար պիտի դառնայ, Ազգային Ժողովը ներկայացուցիչ մը իր քով գտնուի թէ չգտնուի: Իսկ այն պարագային որ ինքը մեկնի, հաստատած առերեւոյթ հանդարտութիւնը, որ մեր գալէն առաջ ալ կար արդէն, յո-

⁴⁹ Կը թօյի թէ Թէքէեան արտագրած է բովանդակութիւնը 13/26 Յունիս թուակիրի համապատասխան պարբերութեան:

⁵⁰ Թափանցիկ է Թէքէեանի ակնարկութիւնը թէ Օրմանեան կը փափաքէր պատրիարք դառնալ եւ ինք ալ Օրմանեանը յարմար թեկնածու կը նկատէր, բայց կը զգուշանար այդ ուղղութեամբ որեւէ յուսադրիչ արտայայտութիւն ունենալէ: Գաղափար մը ունենալու համար Թէքէեանի պարկեշտութեան եւ անաչառութեան մասին, տեղին է նշել հետեւեալը: *Արեւի* 9 Յունուար 1943ի համարին մէջ (թիւ 7312) «Օրմանեանի ինքնադատաստանը» խորագրով *Խոհք եւ Խօսքի* «ամենէն լաւ գրուած մասերէն» մին կազմող վերջին գլուխներէն մէկը ներկայացնելու առիթով, Թէքէեան խմբագրական նշումի մը մէջ կ'ըսէ. «Այս գլուխը այլապէս ալ կարելու է՝ ցոյց տալուն համար սքօղուած բայց անպարտկելի կերպով հեղինակին նկարագիրը իր դրական գիծերուն հետ նաեւ ժխտական գիծերով...» ու կ'աւելցնէ թէ հոն «կ'երեւի կարգ-կանոնի, վարչագիտութեան եւ անշուշտ նաեւ ազգասէր ու հոգեսէր մարդու եզական պատկերը»:

ռեզոյն կերպով պիտի խանգարուի ու այս անգամ գուցէ անդարմանելի ըլլալու աստիճան: Իմ մասիս, կ'սպասեմ տեսնելու թէ Պատկ. Ժողովի միջամտութիւնը ունէ՞ փոփոխութիւն պիտի ներմուծէ՞ արդեօք: Եթէ այո՛, քիչ մը եւս կը մնամ անկէ վերջ, ու կը թողում պաշտօնս ուրիշ փափաքողի մը: Եթէ ոչ, անմիջապէս կը մեկնիմ, գործն ու պատասխանատուութիւնը՝ որմէ չի խուսափիր՝ թողլով Արքազանին:

Մնամ ամենախոնարհ յարգանաց հաւաստեօք
Ներկայացուցիչ
[Վահան Թէքէեան]⁵¹

ԺԲ.

Յաջորդ նամակէն բացորոշապէս կը հասկցուի թէ Թէքէեան նամակ մը ուղղած է Շահիրիկեանի, որուն սեւագիր պատճենը, ի տարբերութիւն իր այսօրեղ ներկայացուող նամակներուն, չէ պահած կամ չէ պահպանուած:

Պերայ, 15/28 Յունիսի 1914

Յարգելի Տիար Վ. Թէքէեան
Երուսաղէմ

Ամսոյս 3/16 անդրանիկ նամակնիդ այսօր ստացայ: Շնորհակալ եմ: Ձեր հաղորդած տեղեկութիւնները ինձ չի զարմացրին. այդպէս էլ սպասում էի. հակառակը հրաշք պիտի լինէր: Ձեր նամակը ինձ չը հասած՝ դուք տեսած կը լինէք մեր թերթի այն համարը՝ ուր խմբագրականով կանխատեսուած ու հրապարակ էր դրուած ձեր հաղորդածների ամփոփումը⁵²:

Բայց դուք Ազգային Ժողովին ո՛չ թէ հրաժարագիր՝ այլ տեղեկագիր էք դրկելու: Ձեր առաջին եւ մեծագոյն ծառայութիւնը պիտի լինի այն՝ որ մասնաւոր նամակով գրածները ի պաշտօնէ ուղղակի Ազգային Ժողովին տեղեկագրէք, ամբաստանէք Վարչութեան եւ Պատուիրակութեան եւ պահանջէք տնտեսական մարմինը: Աւելին կ'ասեմ. ձեր տեղեկագրին մէջ մտցնելու էք նախ քան այստեղից մեկնելը անցուդարձերը, Պատրիարքի ցոյց տուած վերաբերմունքները, գործ դրած միջոցները՝ որոց պատմութիւնը արել էք մեզ եւ որ պատճառ եղաւ, ինչպէս յիշում էք, Պատրիարքի մօտ մեր բացատրութիւն պահանջելու գնալուն:

Եթէ դուք այս տեղեկագիրնիդ չը փութացնէք, Օրմանեան պիտի փութացնի նոր առաջարկը, որից յետոյ՝ եթէ դուք բողոքէք կամ տեղեկագրէք, շատ դժուար կը լինի առաջը առնել:

Եթէ դուք փոխանակ տեղեկագրելու՝ հրաժարական դրկէք, դուք տուած պիտի լինէք մեծագոյն հարուածը Երուսաղէմի խնդրին, մաքրագործութեան դատին, եւ ես մեծ յոյս, հաւատը ունեմ որ այդ դուք չէք անի: Դուք կարող էք միայն ասել, որ եթէ չը պիտի դրկուի տնտեսական մարմինը, եթէ թոյլ պիտի տրուի Օրմանեանական քաղաքականութեանը, աւելորդ կը լինի ձեր Երուսաղէմ մնալը եւ ի զուր ոռճիկ ստանալը:

Ձեր բարոյականի վրայ ո՛չ ոք կը կասկածի եւ ո՛չ ոք տեղի ունի ասելու որ դուք այդ պաշտօնին եւ ոռճիկին տիրանալու հետամտել էք:

⁵¹ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը975–Ը976:

⁵² Ակնարկութիւնը որոշապէս կը վերաբերի *Ազգաբնակչութիւն* մէջ հրատարակուած խմբագրականի մը, որուն մասին ոչ մէկ ծանօթութիւն կրնանք տրամադրել՝ ձեռքի տակ չունենալով թերթին տուեալ շրջանի համարները:

Դուք քաջութիւնը ունեցաք ստանձնելու մի կարեւոր դեր, խնդրում եմ կէս ճանապարհին չը թողել եւ քաջաբար մինչեւ վերջը տանել. այդ դերը պատմական պիտի լինի:

Այս օր իսկ գրեցի Խօճասարեանին⁵³ որ գաղափարակից նեղ շրջանակի հաւաքոյթ կատարուի՝ ձեր գրածները կարդալու համար: Այս տեղ պէտք եղածները զանց չեն առնուի, բայց *վահանը* ձեզնից է գալու, ձեր տեղեկագիրն է լինելու:

Յարգալիր բարեւներով

[Շահրիկեան]⁵⁴

ԺԳ.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 317

Կ. Պոլիս, 8 Յուլիս 1914

Ազնուաշուք

Վահան Էֆէնտի Թէքէեան

Ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ Երուսաղէմի

ի Գահիրէ

Ստացանք նախորդ ամսոյ 30ին Յուլիէն Ձեր Ազնուութեան ուղղած հեռագիրն, որով կը ծանուցանէիք թէ՛ կը մեկնիք Գահիրէ, եւ հոն կ'սպասէք հրահանգի. ինչպէս արդէն ընդունած էիք Երուսաղէմէն Յնս. 14ի Ձեր ընդարձակ նամակը՝ Ձեր մեկնելու պատճառներու մասին:

Կը տեսնենք որ պարզ թիրիմացութիւններ առիթ եղած են Ձեր դժգոհութեանց, եւ այն աստիճան որ ինքզինքնիդ հարկադրուած զգացած էք լքել վանքը ու մեկնիլ, ինչ որ ցաւ պատճառեց մեզ եւ Ազգ. Կեդր. Վարչութեան:

Այն շարժադիւններն՝ զորս առաջ կը բերէք իբրեւ պատճառ Ձեր անակնկալ մեկնումին, կրնային կարգադրուիլ փոխադարձ հասկացողութեամբ, եւ ի հարկին Կեդրոնին միջամտութեամբ, որպէսզի սկսուած բարենորոգչական գործ մը՝ թէ՛ Ձեր եւ թէ՛ մեր պատուիրակներուն միջոցաւ ի գլուխ ելնէր:

Ձեր Ազնուութեան պաշտօնն Ազգային Ժողովէն սահմանուած կանոնադրով արդէն ճշտուած է, եւ պիտի սկսի այն օրէն, երբ կանոնագիրը դրոյի գործադրութեան: Իսկ առայժմ լոկ ուսումնասիրութիւններ են՝ որք առարկայ պիտի ըլլան Ձեր ուշադրութեան եւ անոնց պէտքն կը յուսամք որ դուք իսկ կ'զգաք, ցորչափ անձանօթ էք միջավայրին, անձանց ու հանգամանաց:

Իբրեւ տեղեկութիւն կը հաղորդենք Ձեզ թէ՛ վարչական պատուիրակ Գէորգ Էֆէնտի Կիւրեղեանի տեղ, որ վերադարձած է Պոլիս, այս անգամ նոր ընտրութեամբ վարչական պատուիրակ կարգուած է Քաղաքական Ժողովոյ անդամներէն Ազն.

⁵³ Հայկ Խօճասարեան անդամ էր Ազգային Երեսփոխանական Ժողովի Նախաձեռնութեան Դիւանին եւ գլխաւոր դէմքերէն մին էր որպէս «Կեդրոն» ճանչցուած երեսփոխանական խմբակցութեան:

⁵⁴ ՊՏԴ, տուփ 4, թղթապանակ Թ, Թ18:

Բարսեղ Աւետիսեան Էֆէնտին, որ ի մօտոյ կը մեկնի ի Ս. Երուսաղէմ⁵⁵, գլխաւորաբար գործակցելու եւ փոխացնելու համար պատուիրակութեան աշխատութիւնները:

Գալով Ձեր թոշակին վճարման, ինչպէս նաեւ յարմարագոյն սենեակի խնդրոյն, արդէն կարետոր հրահանգները տրուած են Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի, որով այդ մասին ալ խնդիր չմնար, եւ քաղցր է մեզ յուսալ որ՝ Ձեր Ազնուութիւնն՝ աւելի ոգեւորուած Ս. Աթոռին օգտին ու պայծառութեան նախանձախնդրութեամբ, փափագուած համերաշխութիւնը պիտի արդիւնատուրէ ի պայծառութիւն Ս. Աթոռոյն:

Այս մասին գրած ենք վարչական պատուիրակ Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի՝ Երուսաղէմ, եւ կը հրաւիրենք զՁեզ մեր Յունիս 30 թուականաւ հեռագրին համաձայն վերադառնալ ի Ս. Երուսաղէմ, ուր կարետոր է Ձեր ներկայութիւնը:

Մնամք Աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Զաւէն Արքեպ. Տէր Եղիայեան⁵⁶

ԺԴ.

9 Յուլիս [1914] թուակիր հեռագրով, ուղղուած Երուսաղէմի վանք՝ Թէքէեանի ուշադրութեան, երբ ան արդէն մեկնած էր Երուսաղէմէն, Զաւէն Պատրիարք կ'ըսէ. «Վճարելու հրահանգ դրկած ենք Օրմանեան Սրբազանին: Սպասեցէք Խառն Ժողովի որոշումին»⁵⁷:

Copie

Երս., 27/10 Յուլիս 1914

Ամեն. Տ. Զաւէն, Պատր. եւ Նիսի. Խառն Ժողովոյ

Կը հաստատեմ հետեւեալ հեռագրերու փոխանակութիւնը. Յուլիս 7 (իմս), Յուլիս 8, ստ[ացում] 9ին (Զաւէն Պատր.), Յուլիս 9 (իմս)

Սպասելով սոյն վերջին հեռագրիս պատասխանին, պատիւ ունիմ յայտնելու Պատկ. Ժողովոյդ թէ, ինչպէս հեռագրես ալ կը հասկցուէր, վճարման խնդիրը այժմ սերտ կերպով կ'ապուած կը նկատեմ բողոքիս տրուելիք գոհացման հետ, եւ երբեք չեմ կրնար ընդունիլ որ մին միւսէն նոյնիսկ մէկ օրով անջատուելով խնդիրը այն երեւոյթն առնէ որ դրամական մասին գոհացումը առաջնակարգ կը համարեմ քան բարոյական մասին՝ այսինքն՝ վարչական պատուիրակին կողմէ Ազգային Ժողովոյ Ներկայացուցչին կրել տուած նուաստացման մասին բողոքիս գոհացման: Այս պատճառաւ ստիպուեցայ տալ Բ. հեռագիրը, որուն պարունակութիւնը կը կրկնեմ հոս, այն է «Վճարումը կը մերժեմ առանց կացութեան յստակ եւ անմիջական կարգադրութեան»: Անշուշտ այս չի նշանակեր թէ նիւթական իրաւունքներէս կը հրաժարիմ, այլ կը նշանակէ միայն թէ *ներկայիս* զայն չեմ ուզեր անջատել խնդրոյն ամբողջութենէն մինչեւ Պատկ. Վարչութեանդ կողմէ անոր մասին տրուելիք որոշումը, թէպէտ չափազանց զարմանալի կը գտնեմ միեւնոյն ատեն որ մինչեւ այժմ (Պօլսէն մեկնումէն 2 ամիս ետքը) Պատկ. Վարչութիւնդ տակաւին հաղորդած չլլայ ուղղակի կամ իր պատուիրակին միջոցաւ այստեղ Միաբանութեան, այդտեղ տրուած ո-

⁵⁵ Բարսեղ Աւետիսեան՝ պարագլուխներէն մին Ազգային Երեսփոխանական Ժողովի դաշնակցական խմբակցութեան եւ անդամ՝ անոր Յարաբերական Դիւանին, պիտի չկարենար Երուսաղէմ մեկնիլ:

⁵⁶ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Թ, Թ11–12:

⁵⁷ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը941:

րոշումը ի մասին ինձի տրուելիք ամսաթոշակին: Գոնէ այսպէս կ'ըսէր Օրմանեան Ս. Կիրեղեան էֆ.ի մեկնած օրը (Յունիս 3, Ն[որ] Տ[ումար]) եւ այսպէս է որ այսօր, Յունիսի վերջը, Մայիսի ամսաթոշակն ալ դեռ վճարուած չէ ինձի:- Աւելցնեմ նաեւ որ Ձեր Սրբազնութեան հեռագիրը ստանալէ եւ պատասխանելէ ետք, Վանք գացի երէկ, ուր դիմեցի ելեմտից տեսուչ Գայըզճեան Վարդապետի, որուն յայտնեցի իսկ ստացած հեռագիրս: Վարդապետը պատասխանեց թէ ինք ոեւէ տեղեկութիւն չունի, որու վրայ խնդրեցի իրմէ հաղորդել դիմումն Օրմանեան Ս.ի, եւ յայտնել թէ երբ այս մասին ինձի լուր մը դրկէ՝ պատրաստ եմ վանք երթալու: Անշուշտ՝ եթէ կանչէր՝ միենայնս պիտի յայտարարէի ինչ որ յայտնած եմ արդէն հեռագրիս մէջ, բայց մինչեւ այժմ (օր մը ետքը, երեկոյ) Սրբազանը ոեւէ լուր չէ դրկած:

Կ'կարծեմ [sic!] հասկնալ Ձեր Սրբազնութեան հեռագրին Բ. մասէն թէ Պատկ. Խառն Ժողովը տակաւին որոշում մը տուած չէ իմ ներկայացուցած խնդրոյս մասին: Արդ, իմ ընդարձակ տեղեկագիրս գրած եւ թղթատարին յանձնած եմ 14/27 Յունիսին, որով 11 օր անցած է արդէն Ձեր հեռագիրը տրուած ատեն, ինչ որ բաւական երկար ժամանակ մըն է արդէն՝ ստիպողական խնդրոյ մը համար: Ատկէ զատ, Ձեր Սրբազնութիւնը իր 26 Յունիսի (Ն.Տ.) հեռագրին մէջ կ'ըսէր «Attendez lettre»⁵⁸, մինչդեռ ոեւէ նամակ ստացած չեմ ցարդ:

Ութ օր առաջ ի լոյս իմացայ թէ կառավարութեան թարգմանը վանք գալով, Փոխանորդ Աճէմեան Վարդապետի պաշտօնէ դադրած ըլլալը իմացուցած եւ անլցուցած է, ի պատասխան Տնօրէն Ժողովոյ կողմէ մեր գալէն քիչ առաջ տրուած թագրիւրի⁵⁹ մը - ուր ըսուած է եղեր թէ Պատուիրակութիւնը կ'ընդունին գործոց կարգադրութեան եւ Պատրիարքի ընտրութեան համար, բայց ո՛չ նոր կանոնագրի գործադրութեան համար - թէ կառավարութիւնը ոեւէ նոր կանոնագիր չի ճանչնար եւ Պատուիրակութիւնը այդպիսի պաշտօն մը չունի: Անշուշտ Վարչական Պատուիրակը Պատկ. Ժողովիդ տեղեկագրած է զայս: Եթէ իրողութիւնը այսպէս է, իմ մասին բաւական տարօրինակ կը գտնեմ զայն... Իսկ Աճէմեան Վարդապետի փոխանորդական պաշտօնէն դադրիլը 1 օր միայն տեւած է. Օրմանեան Ս.ի կարգադրութեամբ ըստ առաջնոյն յիշեալը կը շարունակէ պաշտօնավարել:

Նկատելով որ Պատկ. Վարչութեանդ որոշում մը տալն եւ ինձի հաղորդելը կրնայ դեռ օրեր տեւել՝ նոյն իսկ նպաստատրագոյն հաշուով, մտադիր եմ վաղը կամ միւս օր Եգիպտոս անցնիլ եւ հեռագրել Ձեզ թէ այնտեղ կ'սպասեմ որոշման, ըստ այնմ վերադառնալու համար կա՛մ Երուսաղէմ եւ կա՛մ Պոլիս:

Մնամ խորին յարգանքօք

Վ. Թ.

Ներկայացուցիչ Ազգ. Երեսփ. Ժողովոյ Երուսաղէմ⁶⁰

ԺԵ.

Թէքէեան, իր սաղիմական թղթածրարին մէջ պահպանած է պարճէնը անթուակիր նամակի մը (իսկութեան մէջ՝ 6 Օգոստոս 1914 թուակիր, ըստ Օրմանեանի սրորեւ ներկայացուող նամակի պարճէնին), ուր կ'ըսուի.

Ինչպէս յայտնի է, Ազգ. Ժողովոյ Երուսաղէմի ներկայացուցիչ Թէքէեան մօտաւորապէս ամիսէ ի վեր Եգիպտոս կը գտնուի:

⁵⁸ Սպասեցէք նամակի:

⁵⁹ Պաշտօնագիր:

⁶⁰ ԴՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը988:

Քանի մը օր առաջ՝ [Կոստանդնուպոլսոյ] Ս. Պատրիարք Հայրը գրած էր իրեն վերադառնալ իր պաշտօնատեղին, որուն համաձայն Թէքէեան Եաֆա կը մեկնէր այսօր, սակայն ազգային տեղական կարետոր խնդրոյ մը մէջ այստեղ իր ներկայութիւնը անհրաժեշտ դատելով՝ հրաւիրեցինք գէթ շաբաթ մը յետաձգել իր մեկնումը:

Թէքէեան ընդունեց մեր առաջարկը, սակայն խօսակցութեան միջոցին յայտնեց թէ Ս. Պատրիարքը գրած ըլլալով իրեն որ Ձեր Սրբազնութեան հաղորդուած է կարգադրել նաեւ իր ամսաթոշակներու պահանջքը, պիտի չկրնայ իսկ մնալ եթէ այդ պահանջքէն գոնէ մէկ ամսաթոշակը՝ երեսուն օսմ. ոսկի, փութով չստանայ: Ըստ այսմ, իմացնելով Ձեր Սրբազնութեան, պիտի խնդրէի որ հաճէիք Credit Lyonnais-ի կամ Banque Ottomane-ի միջոցաւ հեռագրով այդ գումարը դրկել Աղեքս[անդրիա] Առաջնորդարանիս անուան:⁶¹

ԺԶ.

Բնագրին մէջ կատարուած ջնջումներ եւ յաւելումներ կը թողուն փպատրոթիւնը թէ Թէքէեան ի՛նք հեղինակած է նամակը, զոր Թորգոմ Եպսկ. Գուշակեան (1874–1940) յղած է Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի:

Աղեքս. 2/15 Օգս. 14

Ամեն. Տ. Զաւէն

Պատրիարք եւ Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Կ. Պօլիս

Ձեր Սրբազնութեան 8 Յուլ. եւ համար 327 պաշտօնագիրը հազիւ 1 շաբաթ առաջ այստեղ ստանալու պատիւը ունեցայ:

Ես եւս կը ցաւիմ որ բազմաթիւ հեռագրերու փոխանակութենէն եւ երկու տեղեկագրերու առաքումէն ետք՝ այսքան ուշ միայն կ'ստանամ Ձեր Սրբազնութեան գրութիւնը, որ Ձեր հեռագրով իսկ ծանուցուած էր: Ա՛լ անելի կը ցաւիմ որ առանց ներկայացուցած իրողութիւններու մասին <...> ընելու, Ձեր Սրբազնութիւնը եւ Պատկ. Վարչութիւնը «պարզ թիրիմացութիւններ» կ'անուանէ զանոնք, երբ խնդիրը կը դառնայ Ազգ. Ժողովոյ պատիւն ու որոշումը յարգել կամ ոտնակոխ ընել տալու շուրջը: Այս պատճառաւ, մերժելով հանդերձ թիրիմացութիւն բառը որ ինծի յանձնուած պաշտօնին գիտակցութիւնը չունենալս պիտի նշանակէր, գոհութեամբ կը հաստատեմ միւս կողմէ որ Պատկ. Վարչութիւնը խնդիրը բաւական լուրջ նկատած է, քանի որ զայն կարգադրելու համար իր մէջէն նոր աշխարհական պատուիրակի առաքումը հարկ դատած է, ինչպէս եւ, Ձեր Սրբազնութեան ծանուցման համաձայն, սենեակի եւ թոշակի խնդրոց համար պէտք եղած «կարետոր հրահանգները» տուած է Ամեն. Մաղաքիա Սրբազանին: Առանց ատոնց, իմ ներկայութիւնս Երուսաղէմի մէջ բացարձակապէս անելորդ եւ անկարելի ըլլալով, հարկ համարեր էի Եգիպտոս գալ եւ սպասել անոր գործադրութեան լուրին, մասնատրապէս վարչական նոր պատուիրակ Բ[արսեղ] Աւետ[իսեան] Էֆ.ի մեկնման, որուն հետ միասին յարմար կը գտնէի դառնալ Երուսաղէմ: Ինչպէս բոլոր այս խնդրոյն ընթացքին հետեւած ուղղութենէս յայտնի եղած է Ձեր Սրբազնութեան, յօգուտ գործին եւ ի յարգանս Ազգ. Վարչութեան եւ իր Սրբազան Նախագահին, իմ ջանքս եղաւ խնդրոյն վարչական շրջանակի մէջ կարգադրութիւնը, Ազգ. Ժողովոյ առջեւ զայն հրապա-

⁶¹ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը969:

րակելէ առաջ, եւ այս է պատճառը որ մինչեւ իսկ չուզեցի ճշտել լրագրական խեղաթիւրում եւ նպատակաւոր հրատարակութիւնները:

Ինչպէս ըսի, Կ'սպասէի Բ. Ա. Էֆ.ի Պօլսէն մեկնելու լուրին. սակայն անցեալ շաբթու տեսնելով պատերազմի աղթի կացութեան փոփոխութիւնը, որ հաւանօրէն անկարելի ըրած էր պատուիրակին մեկնումը, պատրաստուեցայ Երուսաղէմ դառնալ եւ ըստ այնմ յաջորդ օրը Աղեքսանդրիայէն մեկնող փոքրիկ նաւով մը դէպի Եաֆա ճամբորդել որոշած, գացի մնաք-բարով ըսել տեղոյս Առաջնորդ Գեր. Թորգոմ Եպս.ի: Առաջնորդ Հայրը, տեղոյս մէջ ծագած խիստ կարետոր ազգային խնդրոյ մը համար աջակցութիւնս պահանջելով, ստիպուեցայ գէթ շաբաթ մը եւս մնալ, ինչ որ Եգիպտոսի երեսփոխանութեան հանգամանքով ի վերջոյ չկրցայ մերժել: Դժբախտաբար, նոր դէպքերու վրդովիչ բնութիւնը թոյլ պիտի չտայ որ մէկ քանի օրէն մեկնիմ: Առաջնորդ Հայրը ասիկա ծանոյց Ամեն. Օրմանեան Ս.ի, իմ կողմէն խնդրելով նաեւ որ յետամնաց 3 ամսաթոշակներէն միոյն փոխարժէքը իսկոյն հոս փոխադրէ հեռագրաւ: Սպասելով այն կարգադրութեան, որ արդէն ուշացած է, ներկայիս կը խնդրեմ Ձեր Սրբազնութենէն ալ որ հաճիք Պօլիս գտնուող եղբօրս, Ճ[իւան] Էֆ. Թէքէեանի, վճարել քսան օ[սմանեան] ո[սկի] ի հաշիւ ամսաթոշակներուս, ինչպէս գրած եմ իրեն որ ներկայանայ պատրիարքարան սոյն գումարը գանձելու համար: Բաց աստի, պիտի խնդրէի որ հաճէիք պէտք եղած կարգադրութիւնը ընել այդտեղ եւ ինձ իմացնել անմիջապէս, որ Երուսաղէմ դարձիս խնդիր չունենամ զինուորական իշխանութեան հետ⁶², առանց որու բոլորովին անիմաստ պիտի ըլլար այս պահուս հոն գտնուիլը:

Յուսալով որ Ձեր Սրբազնութիւնը պիտի հաճի բարեացակամօրէն գոհացում տալ այս երկու կէտերուն, որոց առաջինն արդէն ռեւէ առարկութիւն չի կրնար յարուցանել քանի որ թոշակին Պօլիս կամ Երուսաղէմ վճարումը նոյնն է եւ արդէն որոշուած է, իսկ երկրորդ կէտն ալ ամենակարետոր է պաշտօնին գործադրութեան համար,

Մնամ որդիական խորին յարգանքօք

Վ. Թ.

Ներկայացուցիչ ...

Հասցէ՝ Առաջնորդարան Հայոց Աղեքսանդրիոյ⁶³

ԺԷ.

Պատճէն

Աթոռ

Առաքելական

Երուսաղէմ

16 Օգոստ.ի 1914 ամի

Համար 88

Գեր. Տ. Թորգոմ Ս. Եպս.

Առաջնորդ Եգիպտոսի

⁶² Պարտադիր զինուորագրութեան նոր օրէնքով կը նախատեսուէր զէնքի կոչել մինչեւ 45 տարեկանները: Թէքէեան 1914ին ընդամէնը 36 տարեկան էր: Առանց զերծ կացուցում ըլլալը հաստատող պաշտօնաթուղթի, Թէքէեան կրնար ձերբակալուիլ:

⁶³ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը989:

յԱղեքսանդրիա
Գերապատիւ Սիրելի,
Ստացայ Օգոստ. 10ի գրութիւննիդ, որով կը միջնորդէք որ Պն. Թէքէեան էֆ.ի գումար մը վճարուի:

Իրաւ ժամանակով այսպիսի յանձնարարութիւն մը եղաւ Ազգ. Պատրիարքարանէն, բայց մեր տուած բացատրութեանց վրայ խնդիրը փակուեցաւ եւ չկրկնուեցաւ: Թող որ եթէ կրկնուած ալ ըլլայ, վանական մատակարարութիւնը ծանրապէս զգացած է ժամանակի տագնապը եւ հացի դրամ ճարելու իսկ դժուարութիւն կը կրէ:

Եւն. Եւն. Եւն.

Ողջունիւ սիրոյ մնամ սիրելութեանդ աղօթակից

(Ստոր[ագրութիւն]) Մաղաքիա Արք. Օրմանեան⁶⁴

ԺԸ.

Ս. Յակոբեանց միաբան Կիրակոս Վարդապետ Մարգարեան Սիսի մայրավանքէն 11/24 Յուլիս 1914ին Թէքէեանի կը գրէ.

Ի մասին զեղծարար վարդապետներու վանքէն դուրս հանելու խորհուրդէդ գոհ եւ ուրախ եմ. միթէ զեղծարարները դուրս հանելով իրենց ձեռքով եղած 40 հազար լիւրա եղած պարտքը պիտի վճարուի՞. ոչ. պարտքը դարձեալ վանքին վրայ պարտք պիտի մնայ. ինչ ընելու է: Ես խորհուրդ պիտի տայի ձեզ յօրինակ այլոց յանկարծ այդ զեղծարար վարդապետներու սենեակները կնքելով եւ իրենց շարժական եւ անշարժ կալուածնին գրաւել մօրուքնին գերծել տալով դուրս ընելու է, եթէ ոչ ըսել կ'ուզուի թէ գացէք այդ ձեր գողցած դրամները անուշ անուշ վայելեցէք ... հետ⁶⁵:

ԺԹ.

Պատճէն

Աղեքս. Օգս. 19/Սեպտ. 1 1914

Ամեն Տ. Զաւէն Ս.

Պատիւ ունիմ հաստատելու տեղէն 2/15 Օգս. թուականաւ գրած նամակս, որմէն վերջ ստացայ Գահիրէէն հոս դրկուած հետեւեալ հեռագիրը զոր Ձեր Ս.ը ինձ ուղղած էր 9/22 Օգս.ին

....

Հասկնալով որ այս հեռագիրը տրուած պահուն նամակս ստացուած չէր տակաւին, անելորդ համարեցի հեռագրաւ պատասխանել, մանաւանդ թէ կ'սպասէի Երուսաղէմէն Օրմանեան Սրբազանի առ Թորգոմ Սրբազան տալիք պատասխանին եւ թէ այստեղէն Թուրքիա հեռագրի ծախքը բաւական սուղ է:

Արդ, Օրմանեան Ս. պատասխանեց Թորգոմ Ս.ի, հետեւեալ բառացի պարունակութեամբ...⁶⁶

Ձեր Սրբազնութեան 8 Յուլիս թուակիր պաշտօնագիրը կը յայտնէր թէ «սենեակի եւ թռչակի խնդրոց կարգադրութեան համար պէտք եղած կարելորդ հրահանգները տրուած են Ամեն. Մաղաքիա Ս.ի», մինչ Ամեն. Մաղաքիա Ս. կը գրէ, ինչպէս

⁶⁴ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը990:

⁶⁵ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Թ, Թ13:

⁶⁶ Թէքէեան այստեղ կ'արտագրէ Օրմանեանի նամակը՝ «Ստացայէն ... մինչեւ դժուարութիւն կը կրէ»: Տեսնել Օրմանեան Արք.ի 16 Օգոստոս թուակիրը:

կը տեսնէք, որ իր տուած բացատրութեանց վրայ այդ խնդիրը փակուած է եւ կրկնուած չէ»: Եթէ կատակերգութիւն մը չէ ասիկա, ուրեմն Օրմանեան Ս. բարձրագոյն իշխանութեամբ մը կը տնօրինէ ամէն ինչ, արհամարհելով թէ՛ Ազգային Ժողովին եւ թէ՛ Պատկառելի Վարչութեան որոշումները: Ասով կ'ապացուցուի անգամ մը եւս իմ դիտողութիւններուս հիմնաւորութիւնը:

Ինչպէս Գերաշնորհ Թորգոմ Ս. կը գրէ Ձեզ, հակառակ այս յոյժ աննպաստ պայմաններուն, կրկին ուզեցի դառնալ Երուսաղէմ, բայց տեղի տուի եղած ստիպումներուն, որով առ այժմ դեռ այստեղ կը մնամ: Ինչպէս գիտէք, Պօլսէն մեկնելէս ի վեր բնաւ թոշակ ստացած չեմ եւ դրամական միջոցներս սպառած են այլեւս: Երուսաղէմ դառնալով չեմ ուզեր երթալ վանքը իյնալ եւ Օրմանեան Ս.ի խնդրամատոյց ըլլալ որպէսզի հաճի զիս սնուցանել եւ ազատել զին[ուորական] խնդրէն: Կ'սպասեմ եւ կը պահանջեմ որ Պատկ. Վարչ.ը վերջ տայ այս խաղին, որ արդէն չափազանց երկար տեւեց, Օրմանեան Ս.ի բացատրութիւններուն վրայ իր փակած խնդիրը վերաբանայ, ընդփոյթ ինծի գումար մը հասցնէ հոս առ հաշիւ Մայիսէն սկսեալ եւ իր կողմէ որոշեալ թոշակիս եւ Երուսաղէմի մէջ պաշտօնավարութեանս պայմանները ապահովել վերջ ինծի հրահանգ տայ Երուսաղէմ դառնալու՝ ըստ այնմ Ազգ. Ժողովոյ ներկայացուցչի պաշտօնս այնտեղ կատարել կարենալու համար:

Ներկայ գրութեանս *սփիւղողական* հանգամանքը նկատի առնելով, ըստ այնմ անմիջական կարգադրութիւնը ընելնիդ կը խնդրեմ եւ

կը մնամ ամենախորին յարգանօք

Վ. Թ.

Ներկայացուցիչ ...⁶⁷

Ի.

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ՀԱՅԱԹԵՐԹ

Կ. ՊՈԼԻՍ, Հօճա Խան Ճատտէսի

Կ. Պոլիս, 5/18 Սեպտ. 1914

Սիրելի Թէքէեան,

Ստացայ Ձեր 19/2 Սեպ. թուակիր նամակ[ը] եւ ինչ որ կրնայի ընել ըրի, օգտակար ըլլալու համար քեզի: Նամակիդ մէջ դառնութիւն մը կայ բոլոր անոնց դէմ որոնք հաւատք ունեցած են Օրմանեանին վրայ: Անոնցմէ մէկն ալ ես եմ եւ բնական է թէ այդ մասին ունեցած կարծիքս արտայայտելով, քու մտքիդ մէջ ռեւէ շփոթութեան տեղի չթողում: Օրմանեանի բարեկամները կրնան տարբեր խորհիլ. իմ մասիս եւ Օրմանեանի եւ Թէքէեանի մէջ նախընտրութիւն ընելու պէտք չունիմ, վասնզի ես Օրմանեանը կը ճանչնամ նաեւ իր թերութիւններուն մէջ. գիտեմ թէ անիկա իր փառքը, իր յաջողութեանց պատիւ[ը] ուրիշներու հետ կիսելու կուսակից չէ, ուրիշները տապալելու մէջ հաճոյք կ'իմանայ եւ առաջին կարգի *էնդրիկամ*⁶⁸ մըն է: Ասոնք գիտնալով է որ եւ Ձեզի Երուսաղէմ մեկնած ատեննիդ խիստ վերապահութիւն եւ ծայրայեղ չեզոքութիւն եւ կարծեմ նոյնիսկ սոսկ հանդիսատեսի մը դիրք առնելու պէտքը շեշտեցի: Այդ դիրքը չպահեցիք եւ անկէ է որ առաջ եկալ[ն] բոլոր այս անտեղութիւնները եւ անհամաձայնութիւնները: Օրմանեան՝ Երուսաղէմի մէջ միաբաններու գլուխը անցաւ եւ կեդրոնին դէմ ըմբոստ մը եղաւ: Վարչութիւն, Պատրիարք եւ Ազգ. Ժողով այսօր կատարելապէս համոզուած են թէ արդէն շատոնց ե-

⁶⁷ ՊՏԴ, տուի 9, թղթապանակ LMN51, Ը987:

⁶⁸ Խարդաւանող, մեքենայող:

կած հասած է Օրմանեանը ետ կանչելու ժամը, սակայն արդի ծանր տագնապին մէջ վանքը մատակարարելու դժուարութիւնները աչքի առջեւ ունենալով կը վարանին այս բանը ընելու, վասնզի վանքը այս դրամական անօրինակ տագնապին մէջ վարելն շատ դժուար է: Գալով Պատրիարքին, անիկա Ձեզի դէմ ոչինչ ունի եւ կատարելապէս համամիտ է որ Ձեզի դրամական վճարում մը ըլլայ, սակայն անկարելիութեան առջեւ կը գտնուի: Երուսաղէմ դրամ չունի կամ դրամատուններէն ոչինչ չկարենալով ստանալ Կ. Պոլսէն կը ստանայ ամսական հարիւր ոսկի: Կ. Պոլսոյ Հիւանդանոցը, պատրիարքարանը եւ բոլոր թաղային մարմինները չկարենալով կալուածներու վարձքերը ստանալ, ինչպէս նաեւ իրենց պանքաները թողած աւանդ դրամներէն օգտուիլ՝ նոյնպէս անլուր վիճակի մը ենթարկուած են, եւ Պատրիարքը այս պայմաններուն մէջ վերջէն հաշուակցելու համար ռելէ կերպով, ձեռքին տակ տրամադրելի գումար մը չունի Ձեզի խրկելու համար: Միայն 20 ոսկին անպատճառ պիտի վճարուի Ձեր եղբօրը հակառակ Օրմանեանի պնդումներուն եւ մաքառումին, որ Ձեզի հրաժարած նկատելով այլեւս դրամ ստանալու իրաւունք չունենալնիդ կը պնդէ: Այս վճարումն ալ ապօրէն եղանակով մը պիտի ըլլայ, վասնզի Վարչութիւնը Երուսաղէմ խրկուած 100 ոսկի գումարէն բռնի վար պիտի դնէ 20 ոսկին եւ 80-ը Երուսաղէմ պիտի խրկէ: Ձեր իսկապէս հրաժարած ըլլալը կամ չըլլալն ալ ճշդել Ազգ. Ժողովին կը պատկանի, որ սակայն այս պահուն գումարել անյարմար նկատուեցաւ, խմբակցական ներկայացուցիչներու մէկ գումարման մէջ: Ասով հանդերձ որչափ որ իմ առօրեայ յարաբերութիւններովս կարող եմ շօշափել մեր բարեկամներու կարծիքը, ամենէն աւելի համակիր շրջանակներու մէջ քու Երուսաղէմը ձգել մեկնիլդ ամենավատ տպաւորութիւն ըրած է եւ շատերու կողմէ դասալիքութիւն կը մեկնուի: Ձեր դատը շատ ու շատ տկարացած է Եգիպտոս մեկնելովնիդ, մինչ կրնայիք օրինակի համար վանքէն դուրս ապրիլ այլ սակայն Երուսաղէմ մնալ կամ շատ շատ Եաֆա բնակիլ մինչեւ կարգադրութիւն մը ըլլալը: Դուք անմիջապէս Եգիպտոս անցաք, իոն մնացիք նոյնիսկ Վարչութեան կողմէ Ձեզի մեկնելու եւ Երուսաղէմ դառնալու հրաման տրուելէն յետոյ, եւ ասով կերպով մըն ալ հարկադրեցիք Վարչութիւնը որ Օրմանեանի կողմն աւելի հակի, վասնզի անոր⁶⁹ մեկնելէն յետոյ Վարչութիւնը մէկը չունէր իոն անոր ապաւինելու եւ զայն լծակ գործածելու համար Օրմանեանի դէմ, որուն դէմ ալ ոչ նուազ զայրոյթ կայ:

Կը ցաւիմ որ աւելի բան մը չկրցայ ընել: Արդի պարագաներն ուր կ'ապրինք աւելի բանի մըն ալ ձեռնտու չեն, եւ իոս թշուառութիւնը այնքան ճնշիչ է որ Երուսաղէմով զբաղիլն արդէն ծիծաղելի պիտի ըլլար: Հետեւաբար ես համոզուած եմ թէ արդի ձեռով պիտի երթան գործերը մինչեւ որ վիճակի փոփոխութիւն մը ըլլայ: Ձերդ Արշակ Ալպոյաճեան⁷⁰

ԻԱ.

Հերետեալ նամակով կը պարզուի թէ Թէքէեան ուզած է Երուսաղէմ վերադառնալ, բայց անհրաժեշտ նկատած է պարտադիր զինուորագրութենէ զերծ մնալու կարգադրութիւն մը, որպէսզի կարենայ անարգել ճամբորդել եւ լծուիլ իր պաշտօնին գործադրութեան:

⁶⁹ Կը թուի թէ Ձեր պետք է ըլլայ՝ նախադասութիւնը իմաստաւորելու համար:

⁷⁰ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Թ, Թ14:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ⁷¹
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԽԱՌՆ ԺՈՂՈՎ
ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ 471

Կ. Պոլիս, 22 Սեպտ. 1914

Ազնուաշուք
Վահան էֆ. Թէքէեան
Ներկայացուցիչ Ազգային Ժողովոյ Երուսաղէմի
ի Գահիրէ

Ստացանք հետզհետէ Ձեր Ազնուութեան նախորդ ամսոյ 2 եւ 19 թուականաւ Ա-
ղէքսանդրիայէն ուղղած երկու նամակներն՝ որոնք կը վերաբերէին Ձեր թոշակին
վճարման եւ Երուսաղէմ վերադառնալու մասին զինուորական ծառայութենէ ազատ
մնալու խնդրոց, եւ յանձնեցինք զանոնք Ազգային Կեդր. Վարչութեան Խառն Ժողո-
վոյ ուշադրութեան:

Ձեր զեկուցման համաձայն ներկայացաւ մեզ Ձեր եղբայրը՝ Ճիվան էֆէնտի՝
ստանալու համար թերհաշի քսան ոսկոյ գումարն, եւ Ազգային Վարչութիւնն Ձեր
խնդրանաց համաձայն որոշեց անոր վճարումն եւ կարեւոր յանձնարարութիւններն
ըրա Երուսաղէմ, Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազանի:

Դժբախտաբար, Ազգային Վարչութեան փափաքին հակառակ Ձեր բացակայու-
թիւնն ալ իր երկարատեւ հանգամանքովն չկրնար այլեւս արդարացի հիմ մը կազ-
մել ո՛րեւէ վճարման շարունակութեանը, եւ չենք ալ յուսար որ Ձեր Ազնուութիւնն Ս.
Աթոռին նիւթական ա՛յնքան մեծ ճգնաժամուն մէջ ուզէ հետամտիլ յարատեւ վճար-
մանը նոյն թոշակին, զոր Ազգային Վարչութիւնն հարկադրուած է դադրեցնել Ձեր
Երուսաղէմէն մեկնելու թուականէն սկսեալ: Այսուհանդերձ, որոշուած է որ Ձեր Ազ-
նուութիւնը՝ ցորչափ մնացած է ի Ս. Երուսաղէմ, ստանայ անվթար կերպով Վարչու-
թեան կողմէ իրեն համար սահմանուած ամսական գումարն, եւ այս մտօք կարեւոր
զեկուցումն եղած է վերստին վարչական պատուիրակ Ամենապատիւ Տ. Մաղաքիա
Սրբազանի:

Իսկ գալով Ձեր Ազնուութեան զինուորական ծառայութեան պարագային՝ կը ցա-
փնք յայտնելու որ խնդիրն ներկայացուած է մեզ ա՛յնպիսի պահու մը՝ ուր վարչա-
կան ո՛րեւէ կարգադրութիւն մատնուած է ապարդիւն մնալու: Հրատարակուած օ-
րէնքներու բացարձակ տրամադրութեանց առջեւ, եւ իրաց այս վիճակին մէջ աւելի
Ձեր Ազնուութեան անկ էր եւ կը պատկանի շարժիլ համաձայն ա՛յն պետական տնօ-
րէնութեանց՝ որոնք կը վերաբերին այս մասին:

Մնամք Աղօթարար
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Զաւէն Արքեպ. Տէր Եղիայեան

ԻԲ.

*Երեք փոքրածաւալ թերթիկներու վրայ հետեւեալ թերաւարտ, անթուա-
կիր եւ անխորագիր (թէեւ կը յստականայ աւելի ուշ թէ խորագիրը պէտք է
ըլլայ «Օրմանեանի Մասին») սեւագրութիւնը կը ներկայացնէ Թէքէեանի ա-
ռաջին փորձը՝ մերկացնելու Օրմանեանի մեքենայութիւնները, երբ 1915ին*

⁷¹ ՊՏԴ, տուի 4, թղթապանակ Թ, Թ1:

Եգիպտոս հասած է Օրմանեանի թիւ 11 ծանօթագրութեամբ նշեալ Դիպո-
ղագիրը:

Որքան տեղեակ ենք, Թէքէեան, որ արդէն տարուած կրնար ըլլալ իր
խմբագրապետութեամբ Արեւ թերթը լոյս ընծայելու նախապատրաստա-
կան աշխատանքներով կամ վերահաս եղեռնագութ իրադարձութիւննե-
րով, չէ հրատարակած զայն եւ միայն Խոհք եւ Խօսքի հրատարակութենէն
ետք հրատարակաւ ձեռք առած է նիւթը⁷²:

Նոր Եգիպտոս դրկուած բայց 4/17 Սեպտ. 1914 թուականը կրող ձեռագիր խմո-
րատիպ տետրակի մը մէջ, որուն անունն է *ԴԻՏՈՂԱԳԻՐ*. Երուսաղէմի համար
կազմուած նոր կանոնագրին գննութիւնն ու լուսաբանութիւնը, Մաղաքիա Արքեպս.
Օրմանեան կը ճգնի

ա. ցոյց տալ վերոյիշեալ կանոնագրին վնասակարութիւնը

բ. ինքզինք արդարացնել այն ամբաստանութենէն թէ կանխաւ ծանօթ ըլլալով
նոյն կանոնագրին, զայն գործադրելու կամ անոր գործադրութեան ճամբան յարդա-
րելու պաշտօնով եւ խոստումով գնաց Երուսաղէմ, ուր ոչ միայն բան մը չըրաւ այդ
մտօք այլ եւ գլուխ անցաւ կանոնագիրը մերժող միաբաններուն, որով դաւեց թէ՛
գործին եւ թէ՛ իրեն պաշտօն յանձնող կեդրոնին:

Այդ *Դիպողագիր*ին մէջ գլուխ մըն ալ, վերջընթեր Խ. գլուխը, յատկացուցած է
ըստ նոյն կանոնագրին ընտրուած եւ իրեն հետ Երուսաղէմ դրկուած Ազգ. Ժողովոյ
ներկայացուցչին, Յանկին մէջ «Թէքէեանի մասին» վերտառութեամբ⁷³: Ատկէ թե-

⁷² Թէքէեան 5 Սեպտեմբեր 1921ին նոր պատրիարքի ընտրութեամբ զբաղող Ազ-
գային Երեսփոխանական Ժողովի նիստի ընթացքին Խօսք առնելով պիտի ըսէր.
«Ըստ որում իմ յիշատակութիւնը եղած էր տեղեկագրին մէջ իբրեւ քննիչ Ազգ. Ժո-
ղովին կողմէ, կը փափաքիմ մանրամասն տեղեկութիւն տալ իմ կատարած պաշ-
տօնին համար: Հարկ կը դատեմ ըսելու թէ 1914ի Յունուարին կոչուելով այդ պաշ-
տօնին, մեկնած եմ Երուսաղէմ, ուր Ազգ. Ժողովին ընդունած օրէնքին գործադրու-
թեան համար լուրջ անհամաձայնութիւններ ունեցած եմ Օրմանեան Ս.ի հետ ու
մեկնելով Եգիպտոս, [համաշխարհային Ա.] պատերազմը ծագած ու որեւէ կար-
գադրութիւն չէ կրցած ըլլալ: Ազգ. Պատուիրակութեան կարգադրութեամբ անգամ
մըն ալ գացած եմ Երուսաղէմ 1918ին, բայց միաբանութեան նիւթական վիճակը
այնքան աննպաստ էր որ Եգիպտոսէն սպասուած օգնութիւնները չեն կրցած ըլլալ
եւ վանքին վիճակը մնացած է նոյն կացութեան մէջ: Փափաքելի է որ ըստ որում
անգլ. կառավարութիւնը այս անգամի համար կ'արտօնէ ընտրութիւնը կատարել
Ազգային Ժողովէն, Ժողովին շնորհակալութեան հետ փափաք յայտնուի նաեւ որ
յառաջիկայ ընտրութիւններն ալ տեղի ունենան ազգային օրէնքներու անփոփոխ
պահպանութեամբ» (*Համահաւաք արեւնագրութիւններ Թուրքիոյ հայոց Ազգային
երեսփոխանական Ժողովի, Համագումար ազգային Ժողովի եւ Համազգային
խորհուրդի (1919-1922)*, կազմեց եւ խմբագրեց Վաչէ Ղազարեան, Փորթամութ,
2021, էջ 604): Թէքէեանի սաղիմական առաքելութեան երկրորդ՝ 1918ի հանգր-
ուանին անդրադարձը դուրս կը մնայ ներկայ հրապարակման ծիրէն:

⁷³ Օրմանեան կը գրէր. «Հապա ինչո՞ւ ինծի ուղեկից տրուեցաւ Վահան Թէքէեան
էֆենտին, որ Ընդհանուր Ժողովէն ներկայացուցիչ ընտրուած էր նոր կանոնագի-
րին հսկելու: ... Վարչութիւնը չէր կրնար Ընդհանուր Ժողովին ըրածը ինքնին եղ-

լադրուած ու քաջալերուած, փոխադարձ անսերտութեամբ մը ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ անուանակոչեցի ներկայ գրութիւնը, որ պատասխան մըն է յիշեալ տետրակին: Այդտեղ պաշտպանուած թէզին հիմնական անճշտութիւնը երեսն հանելու եւ տասնեակ մը տարիներէ ի վեր Երուսաղէմի անունով խաղցուած խաղին հին ու նոր մեծագոյն դերակատարը՝ նոյն ինքն Օրմանեանը՝ քողագերծելու գործը, դժբախտաբար կարելի չէ կատարել այս էջերով:

Կան Հայ Եկեղեցւոյ ոգիին եւ օրէնքներուն ինձմէ աւելի հմուտ, ինչպէս նաեւ Օրմանեանի պատրիարքութեան շրջանին մէջ Երուսաղէմի գործերուն աւելի մօտէն հետեւած մէկ քանի անձեր, որոնք անշուշտ պիտի կատարեն այդ աշխատութիւնը՝ երբ պարագաները քիչ մը թոյլատու ըլլան ատոր:

Այսուհանդերձ, որովհետեւ ճիշդ նոյն պարագաները նկատի առնելով բայց անոնցմէ օգտուելու դիտումով է որ Երուսաղէմի վարչական պատուիրակը մէջտեղ նետած է իր ինքնապաշտպանողականը, հարկ կ'ըլլայ որ ես ալ գոնէ համառօտակի զննեմ ու լուսաբանեմ իր <...>

Վեց ամիսէ ի վեր, փափաքի պակասը չէր որ զիս արգիլեց այս խնդիրը հրապարակելու, այլ այն նկատումը թէ Ազգ. Ժողովէն ստացուած պաշտօնի մը համարատուութիւնը նոյն Մարմինին մօտ պարտ էի կատարել՝ անկէ սպասելով նաեւ ծագած կնճիռներուն կարգադրութիւնը⁷⁴

Ազգային Երեսփոխանական Ժողովը 1914ի ամռան արձակուրդային դադարէն ետք պիտի չգումարէր որեւէ նիստ վերահաս աշխարհամարտին պատճառով եւ պիտի կասէր գործադրութիւնը սաղիմական բարեկարգութեան ծրագրին՝ վերստին ձեռք առնուելու համար 1918ի զինադադարէն ետք, ա՛յս անգամ Ազգային Պատուիրակութեան կողմէ, երբ Պաղեստին կը գտնուէր բրիտանական հակակշռի ներքեւ:

ծանել ... Բայց ըրաւ ինչ որ կրնար. բացորոշակի յայտարարեց թէ Թէքէեան էֆէնտի պիտի երթայ, ոչ այժմէն պաշտօնի ձեռնարկելու, այլ կարետոր ուսումնասիրութիւնն ընելու, գործերը սերտելու ... որպէսզի անփորձ չգտնուի երբ որ կարգը գայ իւր պաշտօնը վարելու: Վարելու սկսիլն ալ ենթարկուած էր հետապնդելու գործողութեանց արդիւնքին ... հետեւաբար յայտնի խօսելու համար, աւելի Թէքէեան էֆէնտին Կոստանդնուպոլսէն հեռացնելու նպատակը կը շեշտուէր: ... Թէքէեան էֆէնտի պաշտօնի չէր մտնար, դիրք մը չէր ստանար, պաշտօնական անձ չէր դառնար ... Չեմ գիտեր թէ Թէքէեան էֆէնտի ներքնապէս ինչ համոզում կամ դիտում կամ շարժառիթ ունէր իւր ուղեւորութեանը մէջ. միայն գիտեմ թէ երբ զգաց որ պաշտօն վարելու ժամանակը հասած չէ, հարկ տեսաւ պատճառանք մը փնտռել եւ հեռանալ...»:

⁷⁴ ՊՏԴ, տուի 7, թղթապանակ MD7000, Ը970–Ը972:

FACTS RELATED TO VAHAN TEKEYAN'S JERUSALEMITE MISSION

(Summary)

VATCHE GHAZARIAN (vatcheg@gmail.com)

Owing to administrative and financial mismanagement, which lingered for more than a decade in the Armenian Brotherhood of St. James in Jerusalem—under Ottoman rule at the time—the Armenian National Assembly of Constantinople was compelled to discuss, vote, and adopt new by-laws for the Brotherhood in late 1913.

Consequently, in 1914, the Assembly elected Tekeyan as its representative to the Brotherhood, while Malachia Ormanian, the former Patriarch of the Armenians in Turkey, was entrusted with the role of plenipotentiary delegate of the Central National Administration, to travel together to Jerusalem and contribute to the remediation of the situation.

When the stance and actions of Ormanian—who had masterfully concealed his opposition to the new by-laws—convinced Tekeyan—a true and honest supporter of their implementation—that his efforts would remain futile without an intervention, Tekeyan delivered reports to the Assembly outlining the obstacles placed before him and left for Egypt to await further instructions from the Assembly. Meanwhile, Ormanian remained in Jerusalem.

Ensuing international developments and the eruption of WWI confined Tekeyan to Egypt, and the mission was tabled.

The recently discovered documents presented in this article shed new light on the historic mission and the intentions and actions of Ormanian and Tekeyan. The documents help establish the truth regarding claims that have been in circulation since 1929, when the Brotherhood published Ormanian's account of the mission post mortem, triggering an elaborate response by Tekeyan about the events in 1914, in which he relied on his memory, since these documents were out of his reach at the time.